

# ՆԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՆԴԵՍ

Տպագրված է Նայասարանի Նանրապեղության  
պերսական կառավարման սկիզբնախաղի գիտա-  
կան խորհրդի որոշմամբ

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## Գլխավոր խմբագիր՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

## Խմբագրական խորհուրդ՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ նախագահի առաջին օգնական

ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ նախագահի օգնական

ՄԱՆՎԵԼ ԲԱԴԱՅԱՆ

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ

ՎԱՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ

իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

վնարեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԷԴՈՒԱՐԴ ՕՐԴՅԱՆ

վնարեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՆԱԻՐԱ ՀԱԿՈՔՅԱՆ

հոգեբանական գիտությունների դոկտոր

ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

հոգեբանական գիտությունների դոկտոր

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

քաղաքագիտության դոկտոր

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

փիլիսոփայական գիտ.թեկնածու, դոցենտ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Նանրային կառավարում**  
**27**

**4 -**

**Ա. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ .....4

**ՅՈՒ. ՍՈՒՎԱՐՅԱՆ**

ՆԱՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....18

**Իրավագիտություն**

**28 - 44**

**Գ. ՍԱՖԱՐՅԱՆ**

ՆՈՍՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄԸ .....28

**Տնտեսագիտություն (կառավարում)**

**45 -**

**55**

**Վ. ԲՈՍԱՆՋՅԱՆ, Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՆԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....45

**Նոգերանություն**

**56 -**

**88**

**Ն. ՆԱԿՈՒԹՅԱՆ, Ս. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՈՒՄԻՅ ԴԵՊԻ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԴԵՐԵՐԻ ԵՎ  
ԴԵՐԱՅԻՆ ԴԻՄԱԿՆԵՐԻ ԶԵՌՔԵՐՈՒՄ .....56

**Մ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

ՍԱՆՄԱՆԱՄԵՐԶ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՅԻԱԼ-ՆՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՎԱՐՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՂՆԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....77

**Քաղաքագիտություն**

**89 - 125**

**Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՆԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ  
ԱՅՈՒՄԱՅԻՆ ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....89

**Ա. ԲՐՈՒՏՅԱՆ**

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՆԵՐԹԱՓՈՎՆՅԵԼՈՒ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....107

**ԱՐՄԵՆ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՆՏ ՊԿ ակադեմիայի ղեկավար,  
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

Նամայնքային հանրային ծառայությունը միավորում է հազարավոր պաշտոնատար անձանց և գործակալների (ավելի քան 26000)՝ համայնքային ինստիտուտների և փարբեր մարմինների ծառայությունում, որոնք գործում են համայնքային կառույցում կամ գրնվում են նրա ամենաարարքեր օղակներում (ինչպիսիք են՝ Կենսական և աշխարհային պայմանների բարելավման եվրոպական ֆոնդը, Մասնագիտական հաստատությունների զարգացման եվրոպական կենտրոնը, Եվրոպական համալսարանական ինստիտուտը):

Մինչև 1956 թ. հուլիսի 1-ը, երբ ընդունվեց ծառայողների սրատուրը, ԱՊԵՆ ծառայողներն աշխատանքի էին վերցվում հանրային իրավունքի պայմանագրերով: Նույն կարգն էր գործում նաև Եվրոպական փնտեսական համայնքի, Եվրատոմի ծառայողների համար՝ մինչսրատուրային ժամանակաշրջանում (1958-1962թթ.): Այդ սրատուրների դրույթները միասնական դարձան 1968 թվականին՝ 1967 թ. Միաձուլման պայմանագրի ուժի մեջ մտնելու արդյունքում, որի հետ միասին ուժի մեջ մտավ նաև Եվրոպական համայնքների ծառայողների կարգավիճակը և այլ գործակալների նկատմամբ կիրառվող ռեժիմը սահմանող միասնական սրատուրը: Փոփոխված այդ կանոնակարգը և մի շարք այլ բնագրեր միավորվեցին Նամայնքների ներքին փաստաթղթում, որը կոչվում էր *սրատուր* և կրում էր Եվրոպական

համայնքների ծառայողների և այլ գործակալների նկատմամբ կիրառվող Կանոնների և Կանոնակարգերի ենթավերնագիրը:

Ղեկավարվելով միասնական սրահարույժով՝ այդ անձինք ծառայողական կապի մեջ են գտնվում այն ինստիտուցիաների հետ, որոնցում աշխատում են: Այդ ինստիտուցիաների ղեկավարները ձևավորում են ծառայողներին աշխատանքի վերցնելու և ազատելու լիազորությամբ օժտված մարմիններ: Տարաբերական ինքնուրույնություն ունեցող մարմինների, ասենք, Կենսական և աշխարհաբանական պայմանների բարելավման եվրոպական ֆոնդի, Մասնագիտական հաստատությունների զարգացման եվրոպական կենտրոնի, Եվրոպական համալսարանական ինստիտուտի, Ներդրումային եվրոպական բանկի և մի շարք այլ մարմինների գործակալներ ունեն առանձնահատուկ կարգավիճակ<sup>1</sup>:

Եվրոպական Միության բոլոր ծառայողները կազմում են միասնական մեկ համակարգ՝ Եվրոպական հանրային ծառայություն: Վերջինս ստեղծվել է 60-ական թվականներին և ուժի մեջ է մտել Միաձուլման մասին պայմանագրով և հանգեցրել բոլոր համայնքների համար միասնական Խորհրդի և Տանձնաժողովի կազմավորմանը: Այդ ակտի հիման վրա ընդունվեց Խորհրդի որոշումը «Ծառայողների մեկ միասնական համակազմի՝ որպես հանրային ծառայության ինքնուրույն համակարգի կազմավորման մասին»: Խորհրդի 1968 թվականի Եվրամիության ծառայողների մասին կարգավիճակը, որն ամրագրված է 1968 թվականի N 259/68 աշխատակարգում, փոխարինեց նախկին գործող ակտերին: Տերազայում այն ենթարկվել է բազմաթիվ ուղղումների, փոփոխությունների և լրացումների: Կոնսոլիդացված ոչ պաշտոնական բնագիրը հրատարակվել է 1999 թվականի մայիսին: Այն սահմանում է հանրային ծառայության կարգավիճակը, պաշտոնավորների փոխարինման կարգը, առանձին ծառայողների և պաշտոնատար անձանց կարգա-

<sup>1</sup> Stén Joël Rideau "Droit institutionnel de L'Union et des communautés européennes" 4<sup>e</sup> edition. Paris, 2002, էջ 457-458:

վիճակը, ծառայության անցնելու պայմանները, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Միությունում վարչակազմի հասարիքային պաշտոնը, որպես կանոն, զբաղեցվում է մրցությամբ: Նայարարությունը, որը բովանդակում է տեղեկություններ մրցության, նրա բնույթի, նախատեսվող պաշտոնների, ներկայացվող պահանջների և անցկացման կարգի մասին, տպագրվում է Միության պաշտոնական հրատարակություններում: Մրցության մասնակցում են այն անձինք, ովքեր բավարարում են պահանջվող վկայագրին, որակավորմանը և նորարարությանը: Մրցության կարող են մասնակցել միայն Եվրամիության քաղաքացիները: Մրցությամբ սովորաբար անցկացվում է երկու փուլով: Նախնական ընտրությունն անցկացվում է հիմնականում ներկայացված փաստաթղթերի վերլուծության հիման վրա: Երկրորդ փուլը քննություն հանձնելն է: Քննությունները սովորաբար անցկացվում են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Մրցության հաղթողը նշանակվում է պաշտոնի:

Միության ծառայողներ են համարվում այն անձինք, ովքեր մշտական պաշտոն են զբաղեցնում Միության որևէ ինստիտուտում և նշանակվել են այդ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի կողմից: Նասարիքային պաշտոն զբաղեցնողը մնում է հանրային ծառայության կազմում մինչև կենսաթոշակային փարիքի հասնելը, իսկ պաշտոնից վաղաժամկետ կարող է գրկվել կամավոր, հիվանդության պատճառով կամ ծառայողական ծանր արարքի համար իրավասու ծառայողական մարմինների կայացրած որոշումների հիման վրա: Միության յուրաքանչյուր ծառայող զբաղեցնում է հասարիքացուցակին համապատասխան և կառուցվածքում ընդգրկված դեպարտամենտի, վարչության, բաժնի կամ ենթաբաժնի որևէ պաշտոն: Դա չի բացառում ծառայողի մեկ ենթաբաժնից մեկ այլ ենթաբաժին տեղափոխվելը, այլ ծառայողական առաջխաղացման և նոր պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն է ընձևում:

Բավական մեծ թվով կառուցվածքային հիմնարկներ և բաժիններ է իր մեջ ընդգրկում Եվրոպական հանձնաժողովը: Նրա ենթակայության տակ

գտնվում են 24 գլխավոր վարչություններ (գլխավոր դեպարտամենտներ), որոնք իրենց հերթին փարանջավում են վարչությունների, իսկ վերջիններս էլ՝ բաժինների և ենթաբաժինների: Գլխավոր վարչությունների հետ մեկտեղ, որոնք հստակ աշխատանք են իրականացնում, կան նաև փարափեսակ մասնագիտացված ծառայություններ, որոնք անկախ են և ընդգրկված չեն գլխավոր վարչության կառուցվածքում:

Ինքնուրույն գործառնության թվին են դասվում տեղեկատվական ծառայությունը, պաշտոնական փաստաթղթերի հրատարակման ծառայությունը և այլն: Այս անկախ բաժինների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում իրավաբանական ծառայությունը: Իրավաբանական ծառայության եզրակացությանն են ներկայացվում գլխավոր վարչությունների, վարչությունների, բաժինների կողմից պատրաստված իրավական ակտերի նախագծերը: Առանց իրավաբանական ծառայության նշագրման Տանձնաժողովն ակտերը չի քննարկում: Իրավաբանական ծառայությունը գտնվում է Տանձնաժողովի նախագահի անմիջական ենթակայության ներքո:

Եվրոպական հանրային ծառայության մեջ միավորված բոլոր անձինք բաժանվում են չորս խմբերի՝ A, B, C, D: Բարձրագույն խումբը՝ A-ն, բաժանվում է 8 ենթախմբի, առավել բարձրից՝ A<sup>1</sup>-ից մինչև A<sup>8</sup>-ը, B և C՝ 5, իսկ D-ն՝ 4 խմբի: Բացի դրանից, նրանք փարբերակվում են նաև ըստ ծառայած տարիների, ինչը բավականին ազդում է մասնավորապես աշխատավարձի վրա: Այս կամ այն խմբում ընդգրկվելը պայմանավորված է բարձրագույն կրթության վկայագրով կամ համապատասխան մասնագիտական միջնակարգ կրթությամբ, լրացուցիչ վկայագրերով, նաև նրանով, թե նախկինում ինչ պաշտոններ է զբաղեցրել հայտատու ազգային հանրային ծառայության կամ մասնավոր սեկտորի շրջանակներում<sup>1</sup>:

Աշխատակազմում բարձրագույն պաշտոնները, օրինակ՝ գլխավոր տնօրենի, նրա տեղակալի, վարչության տնօրենի պաշտոններն զբաղեցվում են

<sup>1</sup> Стів ԶН2, н Л. М., "Европейское право", М., 2000, էջ 318-320:

անմիջական նշանակմամբ: Մտորին օղակներում նույնպես այս պաշտոնները չեն զբաղեցվում մրցութային հիմունքներով (օրինակ՝  $D^4$ -ում):

Այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է ոչ թե ընդհանուր վարչակազմին, այլ որոշակի փոխնիկական ծառայողներին, անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական վկայագրի և փոխալ մասնագիտությամբ աշխատանքի փորձի առկայություն:

Միության վարչական անձնակազմի մեջ հատուկ խումբ են կազմում փորձագետները, ովքեր անդամ պետությունների իշխանությունների կողմից գործուղվել են Միության տրամադրության փակ: Ազգային փորձագետների ներգրավման հարցում առաջացող հիմնախնդիրն այն է, որ ձևական վարչական ծառայությունը պետք է բաղկացած լինի այն անձանցից, ովքեր վարձու աշխատողներ են Եվրոպական համայնքներում ու Միությունում և կախում չունեն անդամ պետությունների իշխանություններից: Անկախությունն ենթադրում է, որ այդ ծառայողները չեն կարող (կամ չպետք է) հրամաններ և հրահանգներ ստանալ ազգային իշխանությունների կողմից: Տվյալ դեպքում գործուղված ազգային փորձագետները վճարվում են համապատասխան անդամ պետության կողմից և մնում են որպես ազգային հանրային ծառայության պաշտոնատար անձինք: Սակայն վերջիններիս ընդգրկելը լրացնում է որակավորված անձնակազմի անբավարարությունը, վարչակազմի աշխատանքում առկա հիմնախնդիրները, հաշվի են առնվում ազգային շահերը, որոնք Միության վարչակազմը, իհարկե, լիովին անտեսել չի կարող:

Միությունում հասարիքային պաշտոններ զբաղեցնող ծառայողներից զատ վարչակազմի մեջ կարող են մտնել նաև որոշակի ժամկետով վարձու աշխատողները: Նրանց կարգավիճակը և աշխատավարձը սահմանված է աշխատանքային պայմանագրով, որը կնքվում է մինչև հինգ տարի ժամկետով և չի կարող վերակնքվել մեկ անգամից ավելի: Ծառայողների կազմում ընդգրկված են նաև հատուկ խորհրդականներ, ովքեր կարող են աշխատանքի ընդունվել համապետությամբ: Տվյալ խմբի անձանց հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու տարուց ոչ ավելի ժամկետով:



Առանձնահատուկ կարգավիճակ ունեն Եվրոպական հանրային ծառայության մեջ ներգրավված գիտնականներն ու փորձագետները:

Միության ծառայողներն օժտված են սոցիալական երաշխիքներով: Ծառայողի աշխատավարձը պայմանավորված է խմբով կամ գրադեցրած դիրքով:

Միության բոլոր ծառայողներն ու պաշտոնատար անձինք օգտվում են հատուկ Արձանագրությունով սահմանված անձեռնմխելիությունից և արտոնություններից: Այն ներառում է դատական անձեռնմխելիությունը, ծառայողական գործառույթների իրականացման հետ կապված ելույթների և կարծիքների արտահայտման համար չհետապնդվելը, տեղական հարկերից և վճարներից ազատվելը, հատուկ կենսաթոշակի իրավունքը, ծառայությունն ավարտելուց հետո արտոնության պահպանումը: Այս ամենը՝ բարձր պաշտոնային դրույքաչափերի հետ միասին, որոնք հաճախ բավական բարձր են ազգային ծառայության համապատասխան աստիճանավորների դրույքաչափերից, թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթին մասնակից են դարձնում մեծաթիվ հայտատուների:

Միության ծառայողները ներկայացված են տարբեր մասնագիտացված կոմիտեներում և հանձնաժողովներում, մասնավորապես մասնակցում են հաշվառման, առաջխաղացման և այլ կարգապահական հարցերի վերաբերյալ որոշումների ընդունմանը: Այսպիսին են ինստիտուտներից յուրաքանչյուրի մակարդակով ստեղծված անձնակազմի կոմիտեները, պարիտետային հանձնաժողովները, կարգապահական խորհուրդները և ըստ ներկայացման կոմիտեները (լիազորություններին չհամապատասխանող արարքներ կատարելու համար հեռացնելու, հաստիքների կրճատման և այլն): Վարչակազմի և անձնակազմի կոմիտեի ներկայացուցիչներից ձևավորվում է կանոնադիր կոմիտեն, որը եզրակացություններ է տալիս բոլոր բարեփոխումների հարցերով<sup>1</sup>:

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 321-325:

Աշխատանքային վեճերը, որոնք չեն լուծվում այլ մակարդակներում, շահագրգիռ կողմերի բողոքարկման դեպքում լուծվում են դատական կարգով:

Եվրոպական Միության հանրային ծառայությունը ինտեգրման խնդիրների և նպատակների իրականացման կարևոր գործոններից մեկն է: Վարչակազմը կարևոր դեր է խաղում որոշումների նախագծերի պատրաստման և ոչ պակաս կարևոր դեր՝ ընդունված որոշումների կատարման գործում: Տանրային ծառայության արդյունավետությունը պայմանավորված է Միության առջև ծառայած խնդիրների և նպատակների արդյունավետ իրականացմամբ:

### **ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԸ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ**

Ծառայողները բաժանվում են չորս կարգի՝ սահմանված կրթական մակարդակին համապատասխան.

- A՝ համալսարանական դիպլոմ կամ համապատասխան մակարդակի մասնագիտական փորձ, կառավարչական, հայեցակարգային և գրասենյակային պաշտոններ,
- B՝ միջնակարգ կրթության վկայական կամ համապատասխան մակարդակի մասնագիտական փորձ, կիրառական և կադրային պաշտոններ,
- C՝ միջին կրթության մակարդակ կամ համապատասխան մակարդակի մասնագիտական փորձ, կատարողական պաշտոններ,
- D՝ նախնական կրթության վկայական, համալրված տեխնիկական գիտելիքներ, տեխնիկական կամ սպասարկող պաշտոններ:

A կարգի ծառայողների տոկոսային հարաբերակցությունը շարքի ավելի գերազանցում է ազգային վարչակազմերի համապատասխան ծառայողների թվաքանակը, հարկապես, եթե հաշվի են առնվում այն ծառայողները, ովքեր կատարում են լեզվաբանական աշխատանքներ:

Յուրաքանչյուր կարգ իր հերթին բաժանվում է աստիճանների, որոնք համապարասխանում են պարասխանավորության փորքեր մակարդակների:

Կառավարչական պաշտոններն զբաղեցնում են A կարգի գլխավոր ղեկավարները ( $A^1$ ), ղեկավարները ( $A^2$ ) և ստորաբաժանումների ղեկավարները ( $A^3$ ): Այս կարգը, սակայն, օժտված է որոշակի ճկունությամբ, որը թույլ է փայլա ավելի ցածր աստիճանի պաշտոնավար անձանց պարասխանավոր լինել ողջ համակարգի գործունեության համար<sup>1</sup>:

Յուրաքանչյուր կոչում դասակարգվում է ըստ աստիճանների:

Բացի մշտական ծառայողներից՝ համայնքային հանրային ծառայությունում ընդգրկված են նաև ժամանակավոր գործակալները, ովքեր հաճախ ազգային ծառայողներ են և աշխատանքի են ընդունվել ժամկետային պայմանագրով: Գիտական ոլորտում աշխատող որոշ ժամանակավոր գործակալներ իրենց ժամկետային պայմանագրերի ավարտից հետո կարող են կնքել անժամկետ պայմանագրեր: Ինստիտուտները կարող են նաև դիմել լրացուցիչ գործակալների, ովքեր չեն գործում սահմանված պաշտոնում և վարձարվում են ընդհանուր վարկերի հիման վրա:

Ինստիտուտները (գլխավորապես Նանձնաժողովը) կարող են հրավիրել հատուկ խորհրդականներ, ովքեր հիմնականում աշխատանքի են ընդունվում կես դրույքով և սահմանափակ փութություն: Այդ պրակտիկան թույլ է փայլա ինստիտուտներին օգտվել այն անհատների ծառայություններից, ովքեր ունեն բացառիկ և նշանակալի իրագեկություն: Դա հաճախ օգտագործվում է թոշակի անցած բարձր մակարդակի պաշտոնավար անձանց ծառայությունները պահպանելու համար:

Պայմանագրային աշխատողների նկատմամբ կիրառվում են նրանց պայմանագրերի դրույթները և այլ գործակալների նկատմամբ կիրառվող

<sup>1</sup> Տե՛ս Joël Rideau "Droit institutionnel de L'Union et des communautes européennes" 4<sup>e</sup> edition. Paris, 2002, էջ 458-459:

ոնժիմի կանոնները, որոնք սրապուրփի կանոնների փոխակերպումն են (*mutatis mutandis*):

Տամայնքները կարող են հրավիրել նաև գործակալների, ովքեր աշխատանքի են ընդունվում նախկինում արդեն իսկ կնքված պայմանագրերի ուժով, որոնք ստորագրվել են պետության ազգային իրավունքին համապատասխան: Այդ պայմանագրերի կարարման ընթացքում առաջացած փարաձայնությունները ենթակա են լուծման այն պետության ազգային իրավունքին համապատասխան, որտեղ դրանք կնքվել են:

Եվրոպական համայնքը հաճախ դիմում է նաև ազգային ծառայության համակարգում աշխատած և պաշտոնաթող եղած պաշտոնատար անձանց և վերջիններիս ընդունում աշխատանքի՝ առավելագույնը 3 փարի ժամկետով: Սա նպատակ ունի ապահովել համայնքային և ազգային վարչակազմների միջև կապերի զարգացումը, նպաստել համայնքային իրականության վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, կարարելագործել համայնքային հանրային ծառայությունը՝ ազգային վարչակազմների փորձի օգտագործմամբ:

### **ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՄՂԱՅՈՒՄԸ**

Անձանց աշխատանքի ընդունելն իրականացվում է յուրաքանչյուր ինստիտուտի կողմից բաց մրցույթներով (գրավոր և բանավոր քննություններ): Այդ կարգը չի կիրառվում գլխավոր ղեկավարներին և ղեկավարներին աշխատանքի ընդունելիս: Մրցույթները կարող են լինել ընդհանուր կամ հատուկ և կարող են ծառայել որպես աշխատանքի ընդունելու ռեզերվային միջոց:

Աշխատանքի ընդունելիս, բացի ընդունակությունների չափանիշներից և ծառայության շահերից, պահանջվում է հաշվի առնել նաև փարբեր ազգությունների միջև աշխարհագրական որոշակի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունը (սրապուրփի 27-րդ հոդվածը նախատեսում է, որ

աշխատանքի ընդունումը պետք է իրականացվի առավելագույնս աշխարհագրական հիմքով անդամ պետությունների ներկայացուցիչների միջև և բացառում է, որ պաշտոնը պահվի որևէ մեկ անդամ պետության ներկայացուցիչների համար): Այդ կարգը կգործի հարկապես պատասխանատու պաշտոնների համար:

Արդարադատության և առաջին արյանի դատարանները ջանում են իրավունքի ոլորտում սահմանել այն հիմնական պայմանները, որոնք ինստիտուտների կողմից պետք է պահպանվեն աշխատանքի ընդունելու գործընթացում:

Նամայնքային հանրային ծառայության անձնակազմը համարելիս պետք է պահպանվի աշխարհագրական չափանիշը: Սա նշանակում է, որ ինստիտուտները պետք է ձգտեն ապահովել Եվրոպական Միության անդամ բոլոր պետությունների հավասար ներկայացուցչությունը համայնքային հանրային ծառայության փարբեր օղակներում: Եվրոպական Միության հետագա ընդլայնումների դեպքում այս խնդիրն ավելի մեծ կարևորություն կստանա:

Ինստիտուտները նպատակ են հետապնդում նաև ավելացնել կանանց համամասնությունը A կարգում: Նրանք ձգտում են նաև նպաստավոր պայմաններ ստեղծել հաշմանդամ անձանց պաշտոններ զբաղեցնելու համար:

Աշխատանքային առաջխաղացումը ներառում է աստիճանների բարձրացումներն ավագ պաշտոններում և կոչումների բարձրացումը նշանակովի պաշտոններում: Կարգի և կադրային փոփոխությունները կարող են տեղի ունենալ նաև ներքին մրցույթի արդյունքում:

Լիազորությունների դադարումը կարող է տեղի ունենալ բազմաթիվ պատճառներով՝ հրաժարական, նշանակովի պաշտոնների համար աշխատանքից հեռացնելը, ծառայության շահերից ելնելով՝ թոշակի անցնելը ( $A^1$  և  $A^2$  պաշտոնները՝ դրանց քաղաքական բնույթի պատճառով), աշխատանքից հեռացնելը մասնագիտական անվերանգության համար, հետկանչում, թոշակի ուղարկելը, մահը:

## **ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սրաբարություն ամրագրում է ծառայողների իրավունքներն ու պարտականությունները՝ (11-26-րդ հոդվածներ)՝ նախատեսելով նրանց գործունեության անկախության և ֆինանսական երաշխիքները:

Ծառայողներն օգտվում են կարծիքի և արտահայտվելու ազատությունից:

Սրաբարուրը ծառայողներին պարտավորեցնում է պահպանել զսպվածության և պարկեշտության պահանջները:

Սրաբարուրը սահմանում է ծառայողի պարասխանարվությունը: Նա պարտավոր է կարարել իրեն վարահիված աշխատանքները՝ պահպանելով աստիճանակարգային ենթակայության պայմաններն ու սահմանները:

Սրաբարուրը նախատեսում է ծառայողի պարտավորությունը՝ հատուցել Նամայնքների կրած վնասները, եթե դրանք հասցվել են անձնական լուրջ սխալի հետևանքով:

Սրաբարուրը հիշեցնում է, որ արտոնություններն ու իմունիտետները պրամադրվում են միայն Նամայնքների շահերից ելնելով:

Սրաբարուրը սահմանում է, որ Նամայնքները պարտավոր են աջակցել ծառայողին և հատուցել ծառայողի՝ իր լիազորությունների կարարման ընթացքում կրած վնասները: Նամայնքները պետք է նաև նպաստավոր պայմաններ ստեղծեն համայնքային ծառայողների մասնագիտական կարարելազորման համար:

Սրաբարուրը ճանաչում է միավորվելու իրավունքը: Գործադուլի իրավունքը նախատեսված չէ սրաբարուրով, բայց ծառայողներն իրենց շահերի պաշտպանության նպարակով կարող են գործադուլ հայտարարել:

Ինստիտուտների անդամները, ծառայողները և գործակալները պարտավոր են պահպանել մասնագիտական գաղտնիքը:

1999 թ. մարտին Նանձնաժողովն ընդունեց վարքագծի օրենսգիրք, որի նպատակն է ուղղորդել ծառայողներին և գործակալներին իրենց լիազորությունների կատարման գործում:

2001 թ. հոկտեմբերի 30-ին Նանձնաժողովն ընդունեց կարևոր մի փաստաթուղթ՝ անձնակազմի քաղաքականությունը բարեփոխելու համար, որը գրանցվել է Նանձնաժողովի՝ վարչական բարեփոխման շրջանակներում, որն սկսվել է նրա 2000 թ. մարտի Սպիտակ գրքով<sup>1</sup>:

### **ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԸ**

Ծառայողների դրույքը յուրաքանչյուր փարի վերանայվում և հնարավորինս հարմարեցվում է հարկապես ազգային ծառայողների վարձատրությունների փոփոխություններին: Դրանց գումարվում են դրամական պարգևներ, մասնավորապես, հայրենիքից հեռու գտնվելու դրամական պարգևը, որի նպատակն է հատուցել ծառայողի համար իր պետությունից հեռու գտնվելու հերկանքով առաջացած անհարմարությունները: Դրույքները ենթակա չեն ազգային հարկումների: Նամայնքն ի սկզբանե գանձում է համայնքային հարկ: 1981 թ-ից սկսած՝ դրան ավելացել է ճգնաժամային հարկումը, որի նպատակն է նպաստել փոփոխական ճգնաժամի ծախսերի ֆինանսավորմանը, որը 1992 թվականից փոխարինվեց ժամանակավոր հարկմամբ:

Նամայնքն ունի բազմաճյուղ ընդհանրիկների նպաստների, սոցիալական ապահովության և թոշակների սեփական ռեժիմը, որոնք մասամբ ֆինանսավորվում են դրույքների պահումներից:

Ծառայողների երեխաների կրթության հիմնախնդիրների հետ կապված հարցերը լուծվեցին եվրոպական դպրոցների ստեղծմամբ՝ ինստիտուտների աշխատանքի հիմնական վայրերում:

<sup>1</sup> Jacques Pertek “Droit des institutions de l’Union européenne”, Paris, 2004, էջ 337-338:

## **Ծառայողների կարգապահական ռեժիմը**

Կարգապահական սխալի դեպքում ծառայողների նկատմամբ կարող են կիրառվել փոյժեր (նախազգուշացում, նկատողություն, աստիճանի բարձրացման ժամանակավոր դադարեցում, աստիճանի իջեցում, կոչումի իջեցում, հեղկանչում, թոշակի իրավունքից զրկում): Ամենաձանրը կիրառվում են յորաքանչյոր ինստիտուտի սեփական կարգապահական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո:

## **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ**

Նամայնքային հանրային ծառայության կառավարման գործում կարևոր րեղ է հարկացվում անձնակազմի ներկայացուցիչներից բաղկացած կոմիտեներին, պարիտեպային հանձնաժողովներին, զեկույցի կոմիտեներին և կարգապահական խորհուրդներին: Այդ մարմինները մասնակցում են աշխատանքի նշանակելու և պաշտոնի բարձրացման ընթացակարգերին: Նրանք միջամտում են անձնակազմի ընդհանուր քաղաքականության սահմանմանը և կարգապահական լիազորությունների իրականացմանը:

Նանձնաժողովի ներսում գոյություն ունի նաև օմբուդսմեն, որը հանդես է գալիս որպես միջնորդ վարչակազմի և ծառայողների միջև, խորհուրդներ է րալիս ծառայողներին:

Արհմիութենական կազմակերպությունները կոչված են պաշտպանել իրենց անդամների շահերը:

1982 թ. սրեղծված հատուկ կոմիտեն պարտավորվել է վերահսկել համայնքային հանրային ծառայությունում սեռերի հավասարության քաղաքականության կիրառումը: Գոյություն ունի նաև Նամայնքների համար անօրինականության հանձնաժողով<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Sté Joël Rideau "Droit institutionnel de L'Union et des communes européennes" 4<sup>e</sup> edition, Paris, 2002, էջ 460-463:



**Armen Harutunyan**  
**Doctor of Law, Professor**

## **PUBLIC SERVICE OF THE EUROPEAN UNION**

Community public administration unites thousands of officials and agents (more than 26000) in service of communal institutes and various bodies which function in community structure or operate in its numerous – (such as the European Fund of Improvement of Vital and Life Conditions, European Centre of Development of Professional Institutions, European University Institute).

Before the servants' statute was adopted on 1 July, 1956, ECSC servants were employed according to agreements of public law. The same order was implemented in case of the European Economic Community, Euratom servants in the period before the statute (1958-1962). The principles of these statutes became universal as a result of implementation of the Agreement of Unification along with which the single statute regulating European Community servants' status and the regime of other employers came into power. This amended Regulation and some other texts were compiled in the Inner Document of the Communities called the *Statute* bears the subtitle Rules and Regulations Applied to Servants and Employers of the European Communities.

All the people included in European public service are divided into four main groups: A, B, C and D. The highest A group is divided into 8 subgroups from the highest A1 to A8, and groups B and C – into 5, group D is divided into 4 subgroups. Besides, they are differentiated according to the years they have served, something that particularly influences their salaries. Inclusion in one or other group depends on the certificate of higher education or corresponding secondary or professional education, supplementary certificates and also on what posts the applicant used to hold in the sphere of public service or private enterprises.

Public service of the European Union is one of the important tools of realisation of integration and aims. Administration plays an important role in making draft decisions, not mentioning the role in implementing these decisions. Effectiveness of public service is conditioned by effective realisation of problems and aims of the Union.

**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ**

**ՆՏ ՊԿ ակադեմիայի  
հանրային կառավարման ամբիոնի վարիչ,  
փնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**

**ՆԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

«Հանրային կառավարում» արտահայտությունը համեմատաբար նոր է մտնում շրջանառության մեջ իբրև գիտական կարեգորիա և, սովորաբար, ինչպես յուրաքանչյուր նոր գաղափար, ունի փարբեր մեկնաբանություններ: Հաճախ հանրային կառավարումը նույնացվում է պետական կառավարման հետ՝ դրանք դիֆարկելով իբրև հոմանիշներ: Դա բացատրվում է Public արտահայտության բազմիմաստությամբ. այն թարգմանվում է «հասարակական, հանրային», բայց հաճախ նաև ներկայացվում է «պետական» հասկացությամբ<sup>1</sup>: Սակայն պետական և հանրային կառավարման փարբերությունը սուսկ բառային չէ, այն ավելի շար իմաստային է: Առավել լայն փարածում ունի այն մտերցումը, երբ հանրային կառավարումը ներկայացվում է որպես պետական կառավարման ու փրեղական ինքնակառավարման ամբողջություն: Հանրային կառավարման էության նման մեկնաբանությունն անհիմն չէ, սակայն թերի է: Այդ կարեգորիան իր բովանդակությամբ ավելի լայն ու փարողունակ է, քան պետական կառավարումը և որպես երևույթ՝ հանրային կառավարումը բնորոշ է քաղաքացիական հասարակությանը, որի պայմաններում պետական կառավարումը էվոլյուցիոն զարգացման շնորհիվ վերաճել է հանրային կառավարման: Պերությունը՝ որպես կառավարման մարմին, իշխանության դրսևորում, ի սկզբանև ուղղված է եղել ցեղախմբի, համայնքի, այնուհետև երկրի համար ընդհանուր նպատակների ի-

---

<sup>1</sup> Shtu' Blak Dzhэ Ekonom, ka: Zolkovyy slovarь: anđlo – russk, йэ Mэ IHΦPA – M, „Becь M, p”, 2000, էջ 592-593:

րագործման համակարգմանը, անվտանգության ապահովմանը: Ինչպես պնդել են պետության ծագման բնական իրավական և դաշինքային տեսության կողմնակիցները (Ջ. Լոկ, Ժան-ժակ Ռուսո, Պ.Նոլբախ և այլք), պետությունը հասարակական դաշինքի արդյունք է: Մարդիկ կնքում են հասարակական դաշինք, որով սահմանվում են ընդհանուր կանոններ ու պայմաններ, պաշտպանվում է անձը, նրա սեփականությունը, միաժամանակ նախապեսվում են ընդհանուր կանոնները խախտելու համար պատասխանատվության եղանակներ: Այսպիսով, պետությունը հասարակության քաղաքական կազմակերպման եղանակ է, որն օժտված է օրինական իշխանությամբ ու նպատակաուղղված է որոշակի փարաձառջանում հանրության ընդհանուր նպատակների իրականացմանը և անվտանգության ապահովմանը: Պետական իշխանության ձևավորման գործընթացում, սկսած վաղնջական ժամանակներից, կարևոր գործոն է հանրության անդամների բնական անհավասարությունը, որն այնուհետև պետական իշխանության շնորհիվ ավելի է խորացել ու վերածվել սոցիալական անհավասարության, պայմանավորել էլիտար խավի. այնուհետև՝ օլիգարխիայի առաջացումը: Պատահական չէ, որ մինչև XVIII դարն անգամ եվրոպական երկրներում մեծ մասամբ պետական կառավարումը միապետական կամ ազնվականական բնույթ ուներ:

Քաղաքացիական հասարակության պայմաններում իշխանությունը ձևավորում են այն քաղաքական կազմակերպությունները, որոնք ավելի արդյունավետ կարող են բավարարել մարդկանց պահանջմունքները: Այսինքն՝ պետական իշխանությունը շարունակում է մնալ հասարակական դաշինքի արդյունք, պետական կառավարումը՝ հանրային ծառայության տեսակ, որը մարտոցվում է երկրի բնակչությանը, իսկ նա դրա համար վճարում է զանազան հարկեր և այլ վճարումներ, սակայն փոխվում է իշխանության ձևավորման կառուցակարգը, ընդլայնվում իշխանություն կրողների կազմը և կարևորագույն որոշումների ընդունմանը հանրության մասնակցությունը:

Նախքան հանրային կառավարման բնութագրումը դիտարկենք քաղաքացիական հասարակության էությունը, քանի որ արդի պայմաններում այն

իրավական ժողովրդավարական պետության և տեղական ինքնակառավարման կայացման, զարգացման ու հանրային կառավարման արդյունավետության բարձրացման կարևորագույն նախադրյալն է:

Քաղաքացիական հասարակության էության վերաբերյալ գոյություն ունեն պարբեր մեկնաբանություններ, սակայն դրանցում առանձնանում է գլխավորը՝ օրինականությունը, օրենքի գերակայությունը, արդարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, որոնք դեռևս XVII դարում կարևորել են անգլիացի փիլիսոփաներն ու քաղաքական գործիչները<sup>1</sup>: Քաղաքացիական հասարակությունը բնորոշվում է որպես հատուկ միավորումներում և ինտրիտուրներում կազմակերպված սոցիալական խմբերի ամբողջություն, որի գլխավոր նպատակն է ոչ միայն ուշադրությամբ հետևել պետության գործողություններին, որպեսզի նա մնա օրինականության և սահմանադրական շրջանակներում, այլև օրենքի սահմաններում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները պետական մարմիններին օրինականության դաշտ վերադարձնելու համար<sup>2</sup>: Քաղաքացիական հասարակությանը բնորոշ առանձնահատկություններից է այն, որ երկրի բնակչությունը, դրա շահերը ներկայացնող հասարակական-քաղաքական կազմակերպություններն ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ ձևավորում են պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինները, վերահսկում դրանց գործունեությունը: Այդպիսով հասարակական-քաղաքական կազմակերպությունները նույնպես հանդիսանում են իշխանության կրողներ և պատասխանատվություն կրում իրենց կազմավորած իշխանական մարմինների գործունեության համար: Ուստի, հանրային կառավարումը ներառում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու զանգվածային լրատվության միջոցները (տե՛ս գծանկար 1):


---

<sup>1</sup> Стін ЛоккяДжэСоч, нен, я,я23эМэяМысль,я1988, էջ 311-312:

<sup>2</sup> Стін Теор, яягосЗдарс2вая яправаэПодяредэМарченкояМЭНЭМэЗерцало – М,я 2001, էջ 409:

Գծանկար 1

Տանրային կառավարման համակարգը և կազմավորման կառուցակարգը



Տարև է ընդգծել, որ պետական կառավարումը և հանրային կառավարումը ոչ միայն փառքերվում են իշխանական մարմինների կազմով, այլև որ շար էական է, դրանց ձևավորման սկզբունքներով ու հանրային կառավարման ժողովրդավարական էությանը: Վերջինս դրսևորվում է պետական լիազորությունների մի մասի բնակչության կողմից ուղղակի ընտրությամբ ձևավորված Կրդական ինքնակառավարման մարմիններին պատվիրակման, ընտրական իրավունքի լիակատար իրացման, կարևորագույն հիմնախնդիրները հանրաքվեների, համաժողովրդական քննարկումների միջոցով լուծելու եղանակների գործադրմամբ<sup>1</sup>:

<sup>1</sup> Գրականության մեջ հանրային կառավարումը մեկնաբանվում է որպես «կոլեկտիվների հանրային իշխանության» գործադրում, որն ուղղված է հանրային շահերի իրացմանը (Կրդ, Կր, հրՅՅԻՅԻՅԵԼ, ԿՈԵՅՅԻՅԻՅԵԼԵՆ, ԵՅՄԵՅԻՅՕՐ, ԿՅԵ, ղՅՅՅԵԼ, էջ ԵԵ):  
Կառավարումը պատվիրակված լիազորությունների և իշխանության միագումարն է, իսկ կոլեկտիվն ունի իշխանություն ընդամենը իր ղեկավարի նկատմամբ, ինչը չի կարող դառնալ հանրային կառավարման ելակետ:

Նանրային կառավարման օրյեկտը հասարակությանը համապարփակ հանրային ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերություններն են, իսկ սուրյեկտը՝ հանրային կառավարման մարմինները: Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունի մի մոտեցում, ըստ որի՝ հանրային կառավարման բաղադրիչները ներկայացվում են իբրև հանրային կառավարման տեսակներ: Ըստ այդմ՝ տարբերվում են հետևյալ հինգ տեսակները՝ միջազգային հանրային կառավարում, հանրային պետական կառավարում, դաշնության սուբյեկտների կառավարում, ինքնավար միավորումների կառավարում, տեղական ինքնակառավարում<sup>1</sup>: Նման տեսակներն ընդունելի չէ, որովհետև միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵՄ և այլն) կառավարումը խառնվում է հանրային կառավարման առանձին բաղադրիչներին՝ պետական, այդ թվում՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Կորպորատիվ կառավարումը, որ բնորոշ է առևտրային կազմակերպություններին, նույնպես ուղղակի առնչություն չունի հանրային կառավարման հետ: Դրանց փոխհարաբերությունները դրսևորվում են նրանում, որ վերջինիս մարմինները գործարար կազմակերպությունների համար ստեղծում են գործունեության արտաքին միջավայր:

Յուրաքանչյուր ժողովրդավարական երկրում հանրային կառավարման մարմինների լիազորությունները և գործառնությունները սահմանվում են հիմնական օրենքով (սահմանադրությամբ) և այլ օրենսդրանորմատիվային ակտերով (տեղական ինքնակառավարման, կուսակցությունների, հանրաքվեի մասին օրենքներ և այլն): Օրինակ՝ հանրային կառավարում իրականացնելու համար սկզբունքային նշանակություն ունեն ՆՏ Սահմանադրության 2-րդ և 7-րդ հոդվածները, ըստ որոնց՝

- «ՆՏ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների,

<sup>1</sup> Տևս Վ, րկ, няВЭЭПЗБЛ, чноеВправлен, еэМэяОр, с2ь,я2004, էջ 30-31:

ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»,

- «ՏՏ-ում ճանաչվում է բազմակուսակցությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը»<sup>1</sup>:

Նանրային կառավարման գործառույթները դասակարգվում են երկու խմբի՝ հիմնական և հարուկ: Տիմնական գործառույթները չորսն են՝ նպատակադրման, կազմակերպման, շահադրդման և վերահսկողության: Դրանք ընդհանուր են հանրային կառավարման համակարգի բոլոր մարմինների համար: Նպատակադրման գործառույթի իրագործման արդյունքում սահմանվում է երկրի, դրա առանձին փարածաշրջանների և ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը: Կազմակերպման գործառույթի հիմնական բովանդակությունը երկրի տնտեսության և սոցիալական ոլորտի, տեղական ինքնակառավարման, ազգային անվտանգության համակարգի կառավարման կազմակերպական կառուցվածքի ձևավորումն է, լիազորությունների պարփակումը կառավարման մարմիններին, օրենսդիր, գործադիր, դատական մարմինների գործառույթների հստակ փարանջատումը և պարասխանարվության շրջանակների սահմանումը: Շահադրդման գործառույթն ուղղված է հանրային կառավարման համակարգում աշխատողների աշխատանքի նյութական ու բարոյական փոխհատուցման արդյունավետ համակարգի ստեղծմանն ու գործադրմանը: Վերահսկողության գործառույթը միջոց է՝ ապահովելու ընտրված ռազմավարության իրագործումը, հանրային գույքի արդյունավետ օգտագործումը:

Նարուկ գործառույթները վերաբերում են պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ոլորտային որոշակի գործունեությանը: Մասնավորապես, պետական կառավարման հարուկ գործառույթները բաժանվում են երկու խմբի՝ ներքին և արտաքին<sup>2</sup>: Ներքին գործառույթներից են՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր-մշակութային դաստիարակումը:

<sup>1</sup> Նայասարանի Նանրապետության Սահմանադրություն, Ե., Մխիթար Գեղ, 1997, էջ 4-9:


<sup>2</sup> Стэн Теор, ягосЗдарсЗвая ятрава, էջ 181-184:

րակության, բնապահպանական և այլն: Արտաքին գործառնություններն են՝ պաշտպանական, արտաքին տնտեսական համագործակցության ապահովման, համաշխարհային տնտեսությանը ինտերգրման, արտաքին ներդրումների ներգրավման և այլն:

Տիմնական կամ ընդհանուր և պետության հատուկ գործառնությունների փոխադարձ կապը ներկայացվում է (տես գծանկար 2):

**Գծանկար 2**

**Պետական կառավարման գործառնություններ**



Հատուկ գործառնություններ ունեն նաև տնտեսական ինքնակառավարման մարմինները (համայնքի ղեկավար, ավագանի), հասարակական-քաղաքական կազմակերպությունները, գանգվածային լրատվության միջոցները, որոնք սահմանվում են Սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով ու նորմատիվային ակտերով:



Իրրև կառավարչական գործունեության կարևոր բնագավառ՝ հանրային կառավարմանը բնորոշ են այն սկզբունքներն ու մեթոդները, որոնք գործադրվում են արդի մենեջմենթում: Դրանք նախ Ա.Ֆայոլի հայտնի 14 սկզբունքներն են<sup>1</sup>, ինչպես նաև կառավարման գիտական հիմնավորվածությունը, տնտեսության պետական կարգավորման և տնտեսական ազատության արդյունավետ գուգորդումը, կառավարչական կադրերի ճիշտ ընտրությունն ու տնտեսաշխուժումը, կառավարման գործընթացի, հատկապես կառավարչական որոշումների ընդունման թափանցիկությունը և դրան ենթակաների մասնակցության ապահովումը, կառավարչական գործունեության առավելագույնս ժողովրդավարացումը և ապակենտրոնացումը:

Նանրային կառավարման ոլորտում լայնորեն կիրառվում են կառավարման օբյեկտի վրա ներգործության վարչակազմակերպական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական եղանակները<sup>2</sup>:

Նանրային կառավարման արդյունավետությունը, անշուշտ, գնահատվում է կառավարման համապատասխան մակարդակում սրացված արդյունքների և կատարված ծախսերի համադրմամբ: Սակայն այն էականորեն պայմանավորված է ոչ միայն բուն կառավարչական գործունեությամբ, այլ նաև կառավարման մարմինների ձևավորման և դրանց գործունեության ընթացքում ժողովրդավարական ինստիտուտների նպատակասլաց գործադրմամբ: Դրանցից առաջինն ընտրություններն են, որոնցով կազմավորվում են հանրային կառավարման առանցքային մարմինները (հանրապետության նախագահ, օրենսդիր (ներկայացուցչական) և գործադիր (համայնքի ղեկավար) իշխանություն) և ընտրողների ու ընտրվողների միջև հետադարձ կապի ապահովումը, ինչը վերահսկողության յուրօրինակ ձև է: Չափազանց էական է հանրային կյանքի կարևորագույն հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով համաժողովրդական քննարկումների

<sup>1</sup> Տևս ֆայոլья АэУчен, еяобяЗправлен, , э— яВясбэяНаЗчнааяорган, зац, яя2рЗдая, яЗправлен, яэМэяЭконом, ка,я1965, էջ 364-366:

<sup>2</sup> Տևս «Մենեջմենթ», Յու.Մ.Սուվարյանի ընդ.ղեկ. և խմբ., Ե., Տնտեսագետ, 2002, էջ 191-204:

պրակտիկայի կիրառումը, հանրաքվեների կազմակերպումը: Եթե փարբեր փիպի միապետությունների, ազնվականական պետությունների պարագայում երկրի ճակատագրի համար պատասխանատվություն են կրել ժառանգական իրավունքով օժտված առանձին ընտանիքներ կամ ազնվականական ընտանին, վարչահրամայական համակարգի պայմաններում մի հզոր կուսակցության քաղաքական վերնախավը, ապա հանրային կառավարման պարագայում չափազանց կարևորվում է ժողովրդավարական եղանակներով ժողովրդի իշխանության իրագործումն արդարացի ու թափանցիկ ընտրված իշխանության մարմինների միջոցով, ինչպես նաև ժողովրդավարական արդի այլ ինստիտուտների շնորհիվ:

**Yuri Suvaryan**  
**Doctor of Economics, Professor**

**ESSENCE AND METHODOLOGY  
OF PUBLIC ADMINISTRATION**

Public administration is characteristic of civil society and includes bodies of state government and local self-government, as well as social-political organizations and mass media. Its object is political, economic and social relations arising in the process of providing the society with the complex of public services. And its subject is bodies of public administration.

In the process of public administration main or general (goal, organizational and control) functions are realised which are interconnected.

Public administration is realised via definite methodology – principles and methods (economic, administrative-organizational, social-psychological) and the exercise of democratic institutions.

**ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

**ՆՏ ՊԿ ակադեմիայի  
իրավագիտության ամբիոնի վարիչ,  
իրավագիտության դոկտոր**

**ՆՈՍԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄԸ  
(ՏԵՍԱԿԱՆ ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ)**

Ճոմենական իրավունքի ընդօրինակման (ռեցեպցիայի) հիմնահարցը՝ որպես հասարակական և իրավական կյանքի վիթխարի ու բարդ երևույթ, որպես Նին Աշխարհի, Միջնադարի և Նոր ժամանակաշրջանի կապող օղակ, եղել և դեռևս երկար ժամանակ կմնա իրավաբան գիտնականների սուղեծր ուշադրության կենտրոնում<sup>1</sup>:

Ռեցեպցիա եզրույթն ունի մի քանի իմաստ: Արվեստի, մշակույթի, հասարակական գիտությունների մեջ այն մեկնաբանվում է որպես արվյալ հասարակության կողմից մեկ այլ երկրում կամ այլ փարածաշրջանում ծագած սոցիոլոգիական և մշակութային ձևերի փոխառում:

Իրավունքի վերաբերյալ ռեցեպցիան նույնպես բնութագրում են փարբեր կերպ՝ առանձնացնելով արվյալ երևույթի այս կամ այն բնորոշ կողմերը:

<sup>1</sup> SInu Ispr, nrgяPжДЗхяр, мскогояправаянаяразл, чныхяс23пеняхяегояразж, 2, яж ЧхIх—яСо бхяI875:яSavignyжGeschichteяdesяRomischenяRechtsяimяMittelalter,яI—VII;яStobbeжGeschichteяderяdeutschenяRechtquellen,яI—II,яBraunschweig,я1860—1864:яI оддерманяжРецепт, яя, мскогояправаянаяападех—яI хяI886;яЮ, норадовяю жжяP, мскоеяправояжсредневековойяевропеж—яI хяI910;яШершенев, чяГж жхс2ор, яя ф, лософ, , яправажф яСо бхя1907я(раздж"Средне"еко"ыеяюр, с2ы");яда", дяPжОсно"ныеяпра"о"ыеяс, с2емьясо"ременнос2, ж о ерж ся францж ф яI хя1967;яКосаре"яАж жP, мскоеяпра"оф яI хя1986,ясжI13ф 145;яОняжежP, мскоеячас2ноеяпра"оф яI хя1998,ясж 205ф 250;ятерсесянця бжСж Общяя 2еор, яя пра"ая , я госЗдарс2"ажг чебн, кхф яI хяI999,ясжI00ф 111 և այլն:

Այսպես, ամենաընդհանուր տեսքով ռեցեպցիան կարող է բնութագրվել որպես որևէ պետության կողմից մեկ այլ պետության ավելի զարգացած իրավունքի ընդօրինակում (փոխառում):

Որպես կանոն՝ հռոմեական իրավունքի ռեցեպցիան բնութագրում են որպես մայրցամաքային Եվրոպայի և Շոտլանդիայի համար բնորոշ երևույթ, որը կայանում է «հռոմեական իրավական ժառանգությունը՝ որպես գործող իրավունք ընկալելու և յուրացնելու մեջ»<sup>1</sup>:

Փորձենք ավելի մանրամասն բնութագրել հռոմեական իրավունքի ռեցեպցիան՝ որպես իրավական յուրահատուկ երևույթ: Այսպես պետք է նկատել, որ հռոմեագիտության մեջ ուշադրություն է դարձվել այս հասկացության փարբեր առումներին: Մասնավորապես ընդգծվել է, որ ավաբա-տիրական և բուրժուական Եվրոպայում հռոմեական իրավունքի ռեցեպցիան ներկայացվում է որպես գործողության վերականգնում, ընտրություն, ձևափոխում, յուրացում<sup>2</sup>:

Այս դեպքում մենք գործ ունենք ռեցեպցիայի բավականաչափ բազմակողմանի բնութագրման հետ, թեև չի կարելի չնշել, որ խոսքը հիմնականում այն միջոցների և եղանակների մասին է, որոնց օգնությամբ կատարվում է ռեցեպցիան, և միայն «յուրացում» բառն ակնարկ է պարունակում ինչ-որ խորքային գործընթացների մասին, որոնք տեղի են ունենում կան ռեցեպցիայից առաջ, կան դրա ընթացքում, կան վերջինիս արդյունքն են: Դա զգալիորեն նվազեցնում է բերված բնութագրման արժեքը, քանզի այս թվարկումից հետո էլ ռեցեպցիայի էությունը մնում է չբացահայտված:

Նիմնվելով քաղաքակրթության պարտուրածն զարգացման թեզի վրա և դիտելով իրավունքի ձևափոխումները քաղաքակրթական գործընթացների համարեքսպում՝ կարելի է դիտարկել հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան որպես մի երևույթ, որը ներքուստ բնորոշ է նախորդ քաղա-

<sup>1</sup> «дожде"я дѣжя Р, мскоея час2ноея пра" охф я 1 хя 1996,я сж 4;я Юр, д, ческаяя хкц, клопед, яжф 1 хя1998,ж392.

<sup>2</sup> Косаре"яАх жР, мскоеяпра" охф я хя1986,жж110ж

քակրթությունների մշակութային արժեքների «վերածննդին» մարդկային պատմության զարգացման յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդգծել, որ ռեցեպցիան չի կարելի շփոթել «ռեստավրացիայի» (վերականգնման) կարեգործիայի հետ, քանզի վերջինս նշանակում է որևէ բանի, օրինակ, արվեստի սրելծագործությունների, պատմական հուշարձանների վերականգնում նախաստեղծ վիճակում:

Արտաքուստ այս կարեգործիաները շատ մոտ են միմյանց, սակայն գոյություն ունեն և որոշակի փարբերություններ: Այսպես, ռեցեպցիայի նպատակն է (և, ըստ էության, վերջնական նպատակը) մշակույթի, իրավունքի ոլորտում հին հենքի վրա որևէ նոր բան սրելծելը: Եթե նույնիսկ դա կատարվում է, օրինակ, այս կամ այն գաղափարների, լուծումների, իրավական նորմերի ուղղակի փոխառման ձևով, որպես արդյունք հանդես է գալիս նոր որակի արգասիք, հասարակական զարգացման նոր պարույրի ընթացքում առաջացող, ձևավորվող մի ինչ-որ նոր բան:

Ինչ վերաբերում է ռեստավրացիային, ապա այն հետապնդում է ինչ-որ բանի նախնական վիճակը վերականգնելու նպատակ առանց որևէ փոփոխությունների կամ հավելումների՝ համենայն դեպս, առանց այնպիսի հավելումների, որոնք կարող են խաթարել սկզբնական նյութի բնութագիրը կամ նախաստեղծ վիճակը:

Վերոհիշյալը հաշվի առնելով՝ հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան կարելի է բնութագրել որպես հետագա քաղաքակրթությունների զարգացման ընթացքում նրա հիմնական սկզբունքների, դրույթների գաղափարների և հայեցակարգերի փոխառում (ընդօրինակում):

Պատմաիրավական գրականության մեջ նշվում են հռոմեական իրավունքի ռեցեպցիայի հետևյալ ձևերը.

1. կրթական հաստատություններում ուսումնասիրել որպես հանրակրթական իրավաբանական առարկա՝ ապագա իրավաբանների աշխարհայեցողության ձևավորման նպատակով,

2. հռոմեական իրավունքի՝ որպես մշակութային արժեքի ուսումնասիրում,
3. հռոմեական իրավական աղբյուրների հետազոտում և մեկնաբանում,
4. հռոմեական մասնավոր իրավունքի նորմերի և դրույթների անմիջական կիրառում,
5. հռոմեական պոզիտիվ մասնավոր իրավունքի նորմերի (աղբյուրներ) օգտագործում՝ նորմապիվային ակտեր ստեղծելիս (մասնավոր կորդիֆիկացիոն նախագծեր իրագործելիս),
6. նորմապիվային ակտերի ստեղծման կամ դրանց իրագործման (կիրառման) հունա-հռոմեական մեթոդների օգտագործում,
7. հռոմեական մասնավոր իրավունքի հիմնարար դրույթների, սկզբունքների, գաղափարների և կարեգործիաների ընկալում և օգտագործում<sup>1</sup>:

Առաջարկված դասակարգումը, բնական է, բխում է ռեցեպցիայի առանձին ձևերի ուսումնամեթոդական նպատակներով «տարանջատման» անհրաժեշտությունից: Իրական պրակտիկայում ռեցեպցիան, որպես կանոն, կատարվում է ոչ թե որևէ առանձնակի ձևով, այլ նրանց համակցությամբ և փոխգործողությամբ:

Քանի որ ռեցեպցիան, որպես կանոն, ժամանակի մեջ քաղաքակրթությունների շփման արդյունք է, ապա այդպիսի շփման բնույթից կարելի է սահմանազարկել ուղղակի և միջնորդավորված (աժանցյալ) ռեցեպցիաները:

Ուղղակի ռեցեպցիայի դեպքերը հազվադեպ են: Այդպիսի ռեցեպցիայի օրինակներ կարող են ծառայել հունական իրավունքի ռեցեպցիան Նոմում, հռոմեական իրավունքի ռեցեպցիան՝ Բյուզանդիայում:

Նոմեական մասնավոր իրավունքի նորմերը, նրա առանձին դրույթներն ու իրավական լուծումներն ավելի հաճախ ընդօրինակվել են միջնորդավոր-

<sup>1</sup> Хар, 20но" яе XЖОсно" ыяр, мскогоячас2ногояпра" аф яРос2о" ф наф д он3,я1999,я сж276х

ված: Օրինակ՝ ֆրանսիական և գերմանական քաղաքացիական օրենսգրքերը միջնորդավորված ռեցեպցիայի արդյունք են:

Ռեցեպցիան կարող է լինել ոչ միայն բացահայտ, այլև լարենսը՝ քողարկված: Դա տեղի է ունենում սովորաբար այն դեպքերում, երբ հռոմեական մասնավոր իրավունքի որոշակի գաղափարների կամ սկզբունքային լուծումների փոխառումը կատարվում է օրինասպետի գործունեության ընթացքում՝ հրաժարվելով «հնացած» իրավունքից և այլն:

Ռեցեպցիան բացառվում է որպես հռոմեական իրավունքի նորմատիվ, գաղափարաբանական բովանդակության գործողության վերականգնում (ընտրություն, փոխառում, վերամշակում և յուրացում), որը պիտանի եղավ հասարակական զարգացման ավելի բարձր աստիճանի նոր հարաբերությունների կարգավորման համար: Նոմեական իրավունքի ռեցեպցիան ոչ թե առանձնակի, միանվագ իրադարձություն էր, այլ բարդ և բազմաստիճան գործընթաց: Դրա առաջին քայլերն էին հռոմեական իրավունքի ուսումնասիրումը, որի հիմնական նպատակն էր՝ անցյալի փորձն օգտագործել նոր իրավունքի ստեղծման գործում:

Ընդհանրապես, իրավունքի ընդօրինակումը հասարակության իրավական պահանջումների արդյունք է: Այն ազգային ինքնավար իրավական համակարգերի զարգացումը խթանող կարևոր գործոն է:

Նոմեական իրավունքի ընդօրինակման փուլերը միմյանցից սահմանազարկվում են ոչ միայն ըստ ժամանակաշրջանների, այլև ընդօրինակման եղանակներով, նորովի մեկնաբանման և իմաստավորման առումով, ինչպես նաև գործնական, կիրառական նպատակներով:

Մասնագիտական գրականության մեջ հռոմեական իրավունքի ընդօրինակման գործընթացն ընդունված է ստորաբաժանել հետևյալ շրջանների. առաջին փուլ՝ XI-XV դարեր, երկրորդ փուլ՝ XVI-XVII դարեր և երրորդ փուլ՝ XVIII-XIX դարեր:

Նոմեական իրավունքի ընդօրինակման առաջին փուլին բնութագրական է հռոմեական իրավունքի հեղափոխությունը Իտալիայի համալսարան-



ներում, որը կրում էր ճանաչողական բնույթ և գործնական նպատակներ չէր հեղափոխում: Երկրորդ փուլին բնորոշ է հռոմեական իրավունքի փարսավելին արևմտավրոպական մի շարք երկրներում, որտեղ դրա հեղափոխությունը զուգորդվում էր փոխառյալ պետությունների դատավոր-պրակտիկների կողմից այդ իրավունքի կիրառմամբ: Վերջապես երրորդ փուլում առավել խորությամբ և բազմակողմանի վերամշակվում է ողջ հռոմեական իրավունքի ժառանգությունը, որը հիմք է դառնում նոր ժամանակների պահանջներին համարժեք քաղաքացիական օրենսդրության ձևավորման և դրանց համակարգման համար<sup>1</sup>:

Ավարադիական սովորության իրավունքի նորմերը, լինելով բազմաթիվ և բազմազան, չհամակարգված, նորմատիվ բովանդակությամբ ու կառուցվածքով խառնիխուռն, ի վիճակի չէին համարժեք իրավական լուծումներ փոխ նոր զարգացող ապրանքաշրջանառության պահանջներին: Այդ ամենն օբյեկտիվ նախադրյալներ էին առաջացնում հռոմեական իրավունքի ընդօրինակման համար:

XI դարի վերջին Իտալիայի Բոլոնիա քաղաքի համալսարանում սկիզբ է դրվում հռոմեական իրավունքի ուսումնասիրությանը: Դասախոսություններն են կարդացվում *Coprus juris civilis* ժողովածուի շուրջ, մեկնաբանվում են այդ ժողովածուի իրավանորմերը և դրանով հիմք է դրվում գլոսատորների դպրոցին՝ հայտնի իրավաբան Իրենրի գլխավորությամբ:

XII-XIII դարերում մեկը մյուսին հաջորդում են անվանի գլոսատորներ Բուլգարուսը, Բասունիոսը, Ազզոն և նրանց մեջ ամենանշանավորը՝ Ակկուրդիոսը (մոտ 1182-1260), որը մեկ ժողովածուով (*glossa ordinaria*) հավաքեց բոլոր մեկնաբանությունները և հրատարակեց: Նրանց օգնությանն էին դիմում դատավորները, իրավաբանները հռոմեական իրավունքի այս կամ այն նորմը կիրառելիս:

Գերմանիայի կայսրերն իրենց իշխանությունն ամրապնդելու և հեղինակությունը բարձրացնելու համար դիմում էին հռոմեական իրավունքի օգ-

<sup>1</sup> Տե՛ս Կոսարե" ԴԱՖ ՊՔ, мскоеянас2ноеяпра" օքթ թ չԿ1998,ԽԽ208Խ

նությանը: Եվ պարահական չէ, որ նրանք մշակեցին փեսություն, ըստ որի՝ նրանք համարվում են հռոմեական միապետների իրավահաջորդներ:

Դեռևս XII դարում Ֆրիդրիխ Առաջին Բարբարոսը հռոմեական իրավունքը հայտարարեց որպես համաշխարհային իրավունք: Քերմանիայի միապետներին հարկապես ընդունելի էր Նոմեական կայսրության ժամանակաշրջանի իրավաբանների մշակած՝ «Ինչ հարմար է կայսրին, ունի օրենքի ուժ» արտահայտությունը: Դրանով նաև ցանկանում էին հիմնավորել իրենց անկախությունը կաթոլիկ եկեղեցու պապական իշխանությունից:

XII-XIII դարերում հռոմեական իրավունքի ընդօրինակումն Անգլիայում ուներ որոշակի առանձնահատկություններ: Անգլիայի համալսարաններում նույնպես սկսվում են ուսումնասիրել հռոմեական իրավունքը: Նարկապես դրա հետ է կապվում Օքսֆորդի համալսարանի հիմնադրումը: Սակայն Անգլիայի աշխարհագրական դիրքը (մայրցամաքից կտրված լինելը) և կայուն ու արմատավորված փրկական սովորության իրավունքի համակարգը հնարավորություն չգրկեցին ծավալուն ընդօրինակման: Այդ է վկայում նաև Անգլիայի խոշորագույն իրավաբան Նենրի Բրակտոնի կազմած ժողովածուն՝ «Անգլիայի օրենքների և սովորությունների» մասին<sup>1</sup>: Ժողովածուի հիմնական բովանդակությունն ընդհանուր իրավունքն էր (Common Law), որը ձևավորվել էր թագավորական դատարանների որոշումների (նախադեպերի) հիման վրա: Միայն ընդարձակ ներածական մասում խոսվում է հռոմեական իրավունքի ընդհանուր դրույթների մասին, որոնք կարող էին նպաստել իրավական նորմերի առավել ճիշտ ձևավորմանը և իրավական մտքի զարգացմանը:

Նոմեական իրավունքի գիտագործնական ընդօրինակման շարունակողները XIII-XIV դարերում դարձան, այսպես կոչված, մեկնիչները կամ հերզլոտսպորները: Վերջիններս, ի տարբերություն գլոսատորների, ուսումնասիրում էին ոչ թե հռոմեական իրավունքի բնագրերը՝ սկզբնաղբյուրները,

<sup>1</sup> **Bracton H.** Bracton on the laws and customs of England. V. 1-4.- Camb. Mass., 1968, 1977.

այլ բավարարվում էին միայն գլոսատորների աշխատությունների մեկնաբանությամբ (glossarum glossas scribunt), ձգտում էին վերարտադրել հռոմեական իրավունքի ոգին, նրա էությունը և դրա համար սրբեցնում էին ընդհանրական հասկացություններ. օրինակ՝ սեփականության ընդհանուր հասկացությունը և այլն: Այս դպրոցի երկրորդ կարևոր առանձնահատկությունը հռոմեական իրավունքի ենթարկումն է բնական իրավունքի (juris naturale) պահանջներին: Ըստ այդ դպրոցի ներկայացուցիչների (Բարտոլոուս, Բալդո և այլք)՝ պոզիտիվ իրավունքը պետք է բխի և համապատասխանի բնական իրավունքին:

XVI դարում Ֆրանսիայում ձևավորված հումանիստների դպրոցն անտիկ մշակույթի հետ միասին ուսումնասիրում էր նաև հռոմեական իրավունք: Այդ դպրոցի նշանավոր գիտնականներից էին Կույացիուսը (Cujacius) և Դոնելիուսը (Donellius): Հումանիստների ուսումնասիրությունները նույնպես խթան հանդիսացան հռոմեական իրավունքի հետագա փոխառման և ուսումնասիրման համար: XVII դարից սկսած՝ առևտրաարդյունաբերական փոփոխության զարգացումը նպաստեց հռոմեական իրավունքի փարսեմանը և ընդօրինակմանը:

Полицентрированная интеграционная модель Я образуется в результате активности различных пластов психики, которые со временем не угасают, а, наоборот, создают деловые центры, которые проявляются в различных ситуациях. В современной психологии используется понятие «геологические законы» души. Различаются однослойные люди, развитие которых приостанавливается после формирования первого слоя, или когда последний слой полностью покрывает все предшествующие слои. Этой однослойностью и обусловлена моноцентрированная интеграция личности, в основе которой лежит долговременная идентификация с доминантной ролью. Полицентрированная структура в большинстве случаев разнослойна, где предыдущие слои обуславливают формирование последующих слоев. Эти слои представляют различные этапы формирования личности. В полицентрированной структуре личности новые слои не вытесняют старые, а вступают с ними в диалог, полемизируют. При

этом эта самая полицентрированность становится основой гибкой Я-концепции, что предоставляет возможность рассматривать явления с различных точек зрения. В этой структуре могут мирно сосуществовать несовместимые показатели и различные роли.

В конкретной ситуации активизируется тот или иной центр, со своим ролевым блоком, который может временно стать доминирующим. Однако при доминировании одной из них, взаиморасположение ролей становится таковым, что в случае, когда последние находятся в слабой согласии, а подчас даже в конфликте и, при систематическом применении, а иногда их злоупотреблении, проявляются такие типичные дезорганизирующие явления, как

- фрустрация (интенсивные негативные переживания)
- наличие столкновения (оппозиционистская установка к другим людям)
- агрессивная тенденция
- травмирующая тенденция.

Если человек осознает последствия идентификации с ролью и желает выйти за ее рамки или расширить поле идентификации, то он начинает применять определенные защитные механизмы, в том числе ролевые маски. Они могут быть осознанными, если человек действует целенаправленно или же неосознанными, когда он еще не знает, что он хочет делать.

Конфликт маски и «настоящего» Я давно стал одной из актуальных тем литературы. Маска не настоящее Я и с первого взгляда может показаться, что нет связи с внутренней сущностью Я.

Если в обществе нарушены социально-этические отношения, то люди надевают маски, чтобы скрыть свое истинное лицо. В стихотворении «Распорядитель на костюмированном балу» Паруйр Севак пишет:

Послушайте,

Пора  
Кончать!  
Сорвите маски!  
Обнажите лица!  
Чтоб ветер, стосковавшийся по вашим мордасам,  
Исхлестал вас.

Сорвите маски!  
Воздуха глотните!  
Ну, посудите сами:  
Что за глупость  
Обкрадывать себя и подменять  
Какими –то лемурами?

Вы, сорвите маски!  
Ведь нужно разглядеть самих себя  
Хоть раз –  
До окончания представления!

Что?  
Празднество продлить по вашей просьбе?  
Что ж, празднество продлим по вашей просьбе,  
Попойте, попляшите, побеснуйтесь,  
Попразднуйте – но только  
Без меня.

Нет, я не брошусь под ноги толпе  
С пронзительным проклятием пророка.  
Я промолчу,

Не пророню ни слова,  
 Голосовые связки пощажу.  
 Ведь незачем, а было бы – зачем,  
 То не для кого. Никакой надежды!  
 Но и молчанье – маска не из лучших<sup>1</sup>.  
 (Перевод с армянского В.Топорова)

В стихотворении П.Севака «Природа вещей» маски надевают не только люди, но и вещи. Все и вся в этом мире предстает в масках. Мир преобразается в большой карнавал, где между вещами и людьми создаются своеобразные отношения. Вещи скрывают свое истинное нутро, носят маски, в результате чего человек теряет возможность общаться с ними. Другая сторона этого явления самоотчуждение, когда человек теряет интерес к своей особе, когда его деятельность кажется бессмысленной и сам он в конце концов, устав от всего, желает и сам стать маской. Самоотчуждение дезорганизует поведение человека, дезинтегрирует его Я-концепцию. Но сколько бы человек ни отчуждался бы от самого себя, от своих переживаний, представлял бы их в виде масок, тем не менее он может сохранить единство своего Я.

Выбор ролевых масок только с первого взгляда может показаться случайным. Выясняется, что ролевая маска связана с настоящим Я. Как справедливо замечает И.Кон, маска не кусок окрашенной бумаги. Это определенный типаж, тип поведения, который не может быть нейтральным по отношению к Я, а наоборот, видимыми и невидимыми нитями маска связана с истинным Я. Человек не выбирает произвольно маски. Маска должна компенсировать то, что по оценке самой личности, отсутствует у него. Заботливый человек не нуждается в том, чтобы

<sup>1</sup> Паруйр Севак. Путник, Изд-во «Советаканягրոհ», Ереван, 1981

проявлять заботливость, раболепный – покорность, а веселый – изображать веселость<sup>1</sup>.

Маска способ психологической защиты, исполняет функцию конформизма. Если человек не выбирает произвольно маску, это означает, что между его маской и Я нет разницы. Человек «надевает» ту или иную маску, играет именно эту роль, чтобы через нее выразить свои осознанные и неосознанные желания, вытеснить эту энергию, чего без помощи маски он не может сделать. Говоря иначе, между человеком и его маской существует внутреннее, невидимое, подчас неосознанное родство. Однако удастся ли человеку после приобретения маски освободиться от воздействия своей маски. Или же маска начинает диктовать свою волю личности, свой стиль мышления и действия. Следует отметить, что часто маска начинает побеждать настоящее Я.

Рольевые маски могут иметь положительное значение при новых Я-концепциях, при расширении поля идентификации и объединении психических элементов личности. В ролевых масках мы видим факт разъединения реального и идеального Я личности, поскольку считаем, что в условиях резкого разграничения этих двух Я, в качестве функции защитных механизмов, личность носит рольевые маски, создавая тем самым реальную или иллюзорную связь между двумя основополагающими сущности личности.

Умеренно бесконфликтное разграничение или неполное соответствие двух этих «Я», несомненно, следует рассматривать как решающий фактор самосовершенствования роста личности. Между тем при резком разграничении отмечается высокое нервно-психическое напряжение, негативные эмоциональные процессы. При таких предпосылках личность легко может выйти из состояния адаптированности, а в противном случае,

---

<sup>1</sup> И.Кон. Люди и роли . «Новый мир», 1970, 12

с целью сохранения равновесия, использовать наличный в организме ряд компенсаторных механизмов.

Нами было предпринято экспериментальное исследование, с целью выявить соотношения реального и идеального Я личности, амплитуды их расхождения, составить впечатление о причинах явления. Нами были составлены психogramмы, выявляющие «Я»- реальное и «Я»-идеальное каждой личности.

Наличие количественных элементов позволило нам судить о качественных свойствах личности, а также о том, какие именно поведенческо-стилевые личностные особенности не удовлетворяют личность, что и побуждает ее носить ролевые маски.

Результаты исследования позволили нам охарактеризовать психологические маски как комплексное проявление защитных механизмов личности, при наличии которых она приобретает поверхностную социально-психологическую адаптацию. Таким образом личность приобретает внешне конвергентное состояние, между тем ее внутренняя сущность находится в скрытом (латентном) и дивергентном состоянии, в результате чего нарушается равновесие внутриличностной гармонии.

Фактически, между двумя Я личности наблюдается крайне поляризованные тенденции и, чтобы уравновесить и ослабить эту поляризацию, личность начинает использовать чуждые своей сущности, однако обеспечивающие ее поверхностную адаптацию, защиту. Это вбирает в себя характерные для идеального Я качества, однако в основном в искаженном виде.

Анализ результатов нашего исследования показал, что ролевые маски, обеспечивающие поверхностную социально-психологическую адаптацию и условную психическую гармонию личности закрепляются со временем, «приспосабливаются» и, наконец, формируют соответствующую черту характера или установку.

Невыборочное, систематическое применение масок приводит к формированию ложного Я в самосознании, а подчас и к неправильному отражению доминантности и реальности, что опять-таки свидетельствует о влиянии дезорганизирующих факторов на гармонию и психическое здоровье личности.

В деле контролирования равновесия и гармонии между составляющими психики достаточно эффективным является метод психосинтеза.

По мнению Р.Ассаджоли, из наличия многочисленных Я не следует заключать, что на самом деле существует различные Я. Есть только одно Я, которое проявляется на различных уровнях сознания и самопознания. Мы рабы наших иллюзий, фантазий, неосознанных комплексов. Во внешнем проявлении они кидают нас из стороны в сторону. Неудивительно, что человек ощущает неудовлетворенность, неуверенность. Он становится неустойчивым в своих мыслях и поступках. «Не зная и не понимая самого себя, человек не может управлять собой»<sup>1</sup>. Человек от этого переживает глубокую трагедию. Последствием этой трагедии становится то, что человек теряет душевное равновесие, контроль над собой.

Как может человек выйти из подобного трагического дезорганизирующего состояния? По мнению Р.Ассаджоли, только путем психосинтеза, который имеет следующие этапы.

а) глубокое познание собственной личности, которое предполагает выявление и изучение бессознательного путем психоаналитического метода.

б) осуществление контроля над подструктурами личности. Это весьма важный этап, во время которого следует использовать метод дезидентификации. «Над нами довлеет все то, с чем мы идентифицируем себя. Мы

---

<sup>1</sup> Р. Ассаджоли. Психосинтез: Теория и практика. М., 1994



можем властвовать и контролировать все то, с чем мы себя дезидентифицировали», - пишет Р.Ассаджоли. Если мы говорим «Я раздражен», «Я в безвыходном положении», то исподволь находимся под влиянием этих состояний. А когда говорим «Возмущение охватило меня», то бодрствующее Я не позволит подобным состояниям властвовать над нами. Даже Я может временно отступить, приютиться в своих внутренних укрытиях, однако, в конце концов оно выйдет побудителем. Р.Ассаджоли замечает, что потеря внутреннего равновесия, ощущение бессмысленности и другие психические страдания возникают в то время, когда внутренние элементы психики беспорядочно разбросаны или выступают друг против друга. А когда они объединяются, составляют одно единство - мы чувствуем прилив сил, жизнь вновь осмысляется. Для более организованной борьбы против бессознательных устремлений, следует обратиться к надежным методам, из которых:

- а) Дезорганизация вредоносных комплексов,
- б) Управление и использование освобожденной энергии.

Психоанализ показал, что сила этих комплексов в том, что мы их не осознаем. А для освобождения от комплексов следует пользоваться методами «опредмечивания», «критического анализа», «варьирования» Говоря иначе, мы должны рассматривать их как естественное явление. Для этого между нами и ими следует установить «психологическую дистанцию» и на расстоянии изучать их свойства, происхождение и динамику.

г) Познание истинного Я и создание объединяющего центра, для чего необходимо расширение личного сознания, вплоть до трансформации его в осознание Я. Необходимо нижнее Я объединить с верхним Я. Этот процесс в некотором смысле происходит спонтанно, однако это можно ускорить, используя надежные методы. Его промежуточные этапы связаны с новой идентификацией. Те, кто не в состоянии познать свое истинное Я, могут создать идеальные образы и потом на практике

олицетворить их . Фактически посредством этих идеальных образов (моделей) осуществляется самопознание.

д) Сам психосинтез, то есть, формирование личности или реконструкция вокруг нового центра. Когда мы создаем новый объединяющий центр, то вокруг этого и создается возможность конструировать новую личность, которая внутренне должна быть целостной. Прежде всего, следует иметь перед собой видимую реалистическую цель (идеальную модель) и четкую программу достижения ее. Идеальные модели можно дифференцировать по двум группам. В первую входят те образы, которые олицетворяют гармоничное развитие, личное и душевное совершенство. Идеал такого рода обычно встречается среди интровертов. Идеальные образы второй группы олицетворяют совершенство в одной какой-то области. Как правило, модели такого рода предпочитают экстраверты.

После выбора идеальной модели начинается психосинтез, то есть создание новой личности. Этот процесс предполагает:

а) использование энергий разного порядка, находящихся в нашем распоряжении,

б) развитие недостающих или недостаточно развитых сил , качеств личности,

в) согласование и подразделение различных психических функций и энергий, создание устойчивой структуры личности.

Психосинтез Р.Ассаджоли ставит целью формирование или преобразование личности, на что и направлен комплекс упражнений. Его применение на практике обеспечивает высокую эффективность.

Таким образом можно заключить:

▪ Личность характеризуется сложной структурой, где отдельные составляющие могут преследовать различные интересы, часто находиться в противостоянии. Различные Я могут выполнять различные противо-

положные роли, из-за чего возникают внутренние конфликты, нарушается целостность и психическая гармония личности.

- В некоторых случаях доминантность одной из ролей приводит к идентификации с данной ролью, поведенческой скованности личности, дезинтеграции и к различного рода негативным психическим состоянием и трансформациям, которые часто угрожают психическому здоровью и гармоничности личности. Для выхода из подобных ситуаций важную роль играют ролевые маски, которые выполняют защитную, адаптационную функцию

- Для интеграции составляющих психики, для создания согласия и гармонии между его различными Я, для создания новой личности в соответствии с идеальной моделью эффективно применять предложенный Р.Ассаджоли метод психосинтеза.

**Naira Hakobyan**  
**Doctor of Psychology**

**Svetlana Harutunyan**  
**PhD of Pedagogics**

The article deals with the problems of formation and development of a person's identity in the process of identification. Various levels and forms of identity are revealed, the process of acquiring social roles is tracked. Special attention is paid to the formation of role masks in their negative and positive aspects, that make the foundation of the research. The article is of theoretical and practical value.

**ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ  
ՆՏ ՊԿ սկսողների  
հոգերանության ամբիոնի վարիչ,  
հոգերանական գիտությունների դոկտոր**

**ՍԱՏՄԱՆԱՄԵՐԶ ԳՈՏՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՍՈՅԻԱԼ-ՆՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՏՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մարդկային կեցության ժամանակակից զարգացումներին անխուսափելիորեն զուգակցում են նաև բացասական երևույթները: Դրանք դրսևորվում են բնական և մարդածին աղետների, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամների, համաճարակների, ահաբեկչական գործողությունների, մեծ ու փոքր պատերազմների և այլ ձևերով: Նախկինում մեծ քաղաքներում մշտապես առկա է վրանգի սպառնալիքը: Մի կողմից՝ սպառնացող վրանգի անկանխադասելիությունը, մյուս կողմից՝ մարդու անպաշտպանվածությունը նրան մշտապես պահում է լարվածության, վախի պայմաններում: Այսպիսի դեպքերում օրգանիզմն իր ամբողջականությունը, ներքին հավասարակշռությունը պահպանելու համար գործի է դնում նոր ֆունկցիոնալ համակարգեր, ներգրավում պաշտպանական նոր մեխանիզմներ: Ն.Սելյեն այն անվանում է «ադապտացիոն սինդրոմ»<sup>1</sup>: Չնայած սկզբնական շրջանում օրգանիզմի հնարավորությունների մեծացմանը՝ այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց (այն սուբյեկտիվ բնույթ է կրում) սկսվում է ընդհանուր հնարավորությունների անկման պահը, քանզի աճող սպրեսների պայմաններում օրգանիզմի պահեստային հնարավորություններն սպառվում են: Նկատվում է հոգևածություն, գերհոգևածություն, աշխատունակության կորուստ, հոգեֆիզիոլոգիական համակարգերում՝ ֆունկցիոնալ և կառուցվածքային խանգա-

<sup>1</sup> Селю, Сельея Г. Очерк, ябреданзац, онномя, ядромежл жл ед, зжл 96Ця256жжя

րումներին բնորոշ ախտանշաններ (սիրտ-անոթային, մարսողական, նյարդային, հենաշարժական, և այլն): Արտակարգ իրավիճակներում, երբ մշտապես առկա է վրանգի ենթարկվելու սպառնալիքը, բնակչության լայն զանգվածների մոտ նկատվում են համապարած րագնապի, վախի, դժգոհությունների, խուճապի ռեակցիաներ<sup>1</sup>:

Այսպես, վերջին տարիներին Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մերձավոր Արևելքում հաճախակի դարձած ահաբեկչական գործողությունները զանգվածային րագնապի, ահ ու սարսափի մեջ են պահում միլիոնավոր մարդկանց: Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ վաղուց արդեն իր հաստատուն տեղն է գտել «քաղաքային վախ» հասկացությունը, որը XXI դարի մարդու մշտական ուղեկիցն է<sup>2</sup>:

Ն բնակչությունը, սկսած անցյալ դարի ութսունական թվականների վերջերից մինչ օրս, հայտնի պարճառներով ապրում է այդ հոգեվիճակը՝ իր բոլոր հետևանքներով: Ըստ Լ.Կուրիկովի ուսումնասիրության րվյալների՝ օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների անկումը, սահմանային հոգեվիճակների զարգացումը, հիվանդագին վիճակների սրացումը տեղի են ունենում հոգեկան ոլորտի րևական լարվածության պայմաններում<sup>3</sup>: Մեր հանրապետությունում 90-ական թվականների սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխություններն իրենց հետ բերեցին նաև բազմաթիվ բացասական երևույթներ: Դրանք արտահայտվում էին մարդկանց զանգվածային գորճագրկության, մարդու իրավունքների ոտնահարման, շարերի կողմից նոր ճնավորվող հասարակությունը դեռևս չըմբռնելու, տնտեսական և այլ դժվարությունների ճնելով: Շար կարճ ժամանակահատվածում տեղի ունեցող դեռևս անհասկանալի փոփոխություններն ակամայից մարդկանց հոգե-

<sup>1</sup> Slu, я о е2po"я тжя ) ело"ека "я чрез", чайныхя с, 23ац, яхжя ) еляб, нск,я ЮжноЗральскоежн, жноея зда2ельс2" ож1997жсжж

<sup>2</sup> Slu, ЛебедьяЛжс2рах, я яс2рессьябольшогоя"ородажРос2о" ф наф dон3жт ен, кс,я 2Ц4,я317ж

<sup>3</sup> Slu, К3л, ко"я Лжжя о с, хог, г, еная л, чнос2, ж вопросья пс, холог, ческойя 3с2ойч, "ос2, я ятс, холопроф, лак2, к, жл хяю h ТеРж2Ц4жс276ж

կան ոլորտում (և ամբողջ օրգանիզմում) առաջացնում էին խորքային և կառուցվածքային փոփոխություններ<sup>1</sup>: Այսպիսի դեպքերում ամենափոքր բացասական գործոնը կարող է մարդու օրգանիզմում առաջացնել անոթային հիվանդություններ, ուղեղի փոքրերի հարվածների կաթվածահարություն, ուռուցքներ և այլն: Եթե անդրադառնանք սահմանամերձ գոտու բնակչությանը, ապա նրանք դեռևս անցյալ դարի 80-ական թվականների վերջերից մինչ օրս էլ գտնվում են այդ վիճակում: Նրանք ապրել են մինչ պատերազմական, քաղաքական, սոցիալ-փոփոխական, հոգևրանական լարվածությունը, պատերազմի հետ կապված մարդկային և նյութական, բարոյական կորուստների սփռեսային վիճակները, իսկ պատերազմի հարաբերական ավարտից հետո (դեռևս խաղաղության պայմանագիր կնքված չէ), սահմանի մյուս կողմից արձակվող կրակահերթերն այդ տարածքներում ապրող մարդկանց պահում են մշտական լարվածության մեջ:

Բացասական հույզերի մշտական առկայությունն անդրադառնում է մարդկանց ընդհանուր և հոգևրանական առողջության վրա: Նման պայմաններում փոխվում են անձի կենսագործունեության դրոշմապատկերները, հետաքրքրությունները, արժեքային կողմնորոշիչները, ներկայի ու ապագայի նկատմամբ վերաբերմունքը և այլն: Անձի մտահոգությունն իր և իր հարազատների առողջության նկատմամբ դառնում է գերխնդիր՝ կապված անբարենպաստ պայմաններում կենսագործունեության պահպանման հետ: Մյուս կողմից՝ համապարփադ ղեկավարությունները սահմանափակում են անձի ինքնադրսևորման շրջանակները: Գործունեության, շփման, հաղորդակցման դաշտը դառնում է գուր անձնական կարիքների բավարարմանն ուղղված ակտիվության դրսևորում: Մրվում են ինքնապաշտպանական հոգևֆիզիոլոգիական մեխանիզմները: Անձի գիտակցական ակտիվությունն ուղղվում է սեփական «ես»-ի, «իմ»-ի պահպանմանը, նրա գոյատևմանը: Ընդհանուրը,

<sup>1</sup> Տևս, Մկրտումյան Մ. Երվնսավածքային վիճակների հոգևրանական բնութագրերը (1988-1994թթ. ՏՏ բնակչության օրինակով): Բանբեր Երևանի համալսարանի, 2 (95), էջ 197-204:

ուրիշներինը դառնում են նրա գիտակցության համար խորթ: Անձը ձեռք է բերում եսակենտրոն բնավորության շեշտավորված գծեր, որոնք ժամանակի ընթացքում նրա համար դառնում են կայուն բնութագրեր:

Թերևս նաև այս կառուցակարգով կարելի է բացատրել հայերի մոտ դրսևորվող ինդիվիդուալիզմը, խմբային համագործակցության ձգված պակասը: Նայ ժողովուրդը դարեր առաջ՝ պեղականությունը կորցնելուց հետո հայրնվեց ձուլման և փարբեր արհավիրքների, վրանգների պայմաններում: Գոյարևման մշտական պայքարը դարձավ ապրելակերպ: Ինչ խոսք, բազմադարյան մաքառումների պայմաններում հայ ժողովուրդը թրծվեց, բյուրեղացավ ու աչքի ընկավ միմիայն իրեն բնորոշ բարձր հոգեկան հատկանիշներով և ունակություններով: Սակայն, անդառնալի կորուստների հետ կապված, սերունդների հիշողության մեջ պահպանվող ապրումները (վիշտը, կսկիծը, ցասումը, բողոքը) «մնացորդային» հույզերի ձևով փոխանցվել են իրենց ժառանգներին: Ժամանակի ընթացքում ձևավորվել են հայերին բնորոշ հուզականության, դիմախաղի, երևույթների նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի դրսևորման կայուն գծեր: Դրանցից ազատվելու հնարավորության բացակայությունը մարդկանց հոգեկան համակարգում ձևավորել է իրականության գնահատման, արտացոլման հային բնորոշ ձևեր:

Նկրագործության նպատակն է՝ ուսումնասիրել անբարենպաստ պայմաններում գրավող մարդկանց հոգեվիճակների սոցիալ-հոգևրանական վարքի փոխակերպման առանձնահատկությունները:

Նկրագործության մեջ ընդգրկվել են 18-60 տարեկան 200 մարդ, ովքեր, ըստ տարիքային առանձնահատկությունների, ֆիզիկական ակտիվության, բաժանվել են 4 խմբի, յուրաքանչյուրում՝ 50-ական մարդ (25 տղամարդ և 25 կին): Բաժանումը կատարվել է՝ հաշվի առնելով նրանց տարիքային և ֆիզիկական առողջության առանձնահատկությունները: Երիտասարդներ՝ 18-ից մինչև 35 տարեկան, հասուն մարդիկ՝ 36-45 տարեկան, միջին տարիքի՝ 46-55 և ավագ՝ 56-65 տարեկան անձինք:

Ուսումնասիրվել են հեղափոխությունների իրավիճակային և անձնային



տազնապալիության մակարդակը, սարես-գործոնների նկատմամբ կայունությունը, նյարդա-հոգեկան լարվածության մակարդակը, առողջության և երջանկության ինքնագնահատականը, բնավորության շեշտվածության դրսևորումները: Միևնույն ժամանակ հարցաթերթիկի միջոցով ուսումնասիրվել է հետազոտվողների անվտանգության սուբյեկտիվ գզգսման մակարդակը:

Ղերազոտությունն իրականացվել է մայրաքաղաքի և սահմանամերձ գոտու (Տավուշի մարզ) բնակչության հետ՝ 1998-2003 թվականների ընթացքում: Ղերազոտության մասնակիցները, նախնական հարցման համաձայն, վերջին 10-15 տարիների ընթացքում ենթարկվել են ամենաարարեր բացասական գործոնների ազդեցության, որոնց տրականությունը՝ և ուժգնությունը, իրենց իսկ պնդմամբ, մեծ է եղել:

Ղերազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ չորս խմբում էլ սեփական անձի, հարազատների, մերձավորների անվտանգության և ապահովության գզգսումը գտնվում է ցածր մակարդակի վրա: Օրգանական և ընդհանուր աշխատունակության հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունները, ըստ Վ. Ռոժդենսարվենսկայայի հետազոտության տրվյալների<sup>1</sup>, խոսում են ընդհանուր հոգնածության, գերհոգնածության, օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների անկման մասին: Երջանկության ինքնագնահատականը միջին առողջություն և ապրելակերպ ունեցող մարդկանց մոտ, ըստ թեստի պահանջների, պետք է կենտրոնացվի ուղղահայաց առանցքի 0-ական մակարդակի շուրջ՝  $\pm 2$  միավորի շրջանակներում:  $\pm 3$  և ավելի – ինքնագնահատականը խոսում է + -ի դեպքում՝ ոչ օրյեկտիվ գնահատականի, իսկ –ի դեպքում՝ դժբախտ լինելու մասին: Մեր համակազմի 3 խմբում էլ, բացի երիտասարդներից, երջանկության ինքնագնահատականը հիմնականում կենտրոնանում է  $- 2$  նիշից ցածր:

<sup>1</sup> Տնի, յՔոձԵԵԵՂ՝ Ենսկայաի ՈՁ, ՁՅալնյեբրաՅ, Կ, յբրաբոՅօսբօսոբոսԵ, յՂ յՂ օ Եադոգ, կա, յՂ198ՂՂ192ՂՂ յ

Երջանկության հոգևրանական կառուցվածքի բաղադրարարրերից է ազար գործելու, հնարավորությունների լիարժեք իրականացման, ամնաարարրեր պահանջմունքների բավարարման կարողունակությունը: Մակայն սոցիալ-լրնրեսական համարարած դժվարությունները, հոգևրանական փոփոխվող արժեքների առկայությունը և ինքնադրսնորման պայմանների բացակայությունը, բնականաբար, փոխում են մարդկանց պարկերացումները երջանկության և առողջության վերաբերյալ:

Տագնապալիության մակարդակը չափվել է Թելյորի անձնային և իրավիճակային րագնապալիության թեստի օգնությամբ: Նարկ է նշել, որ րագնապալիության մակարդակը բարձր է (20-ից բարձր մինչև 40-45 միավոր) հասում և միջին րարիքի անձանց մոլ, ովքեր ընրանիքի հիմնական նեցուկն են, կերակրողը, առօրյայում անհամեմար շար են ենթարկվում սրրեսածին, րագնապ առաջացնող գործոնների ազդեցությանը: Տնական րագնապը, վախը, լարվածությունը, ընկճվածությունը հանգեցնում են օրգանիզմի կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխությունների, որոնք թողրվության պայմաններում (վերականգնողական աշխարանքների բացակայության) միրում ունեն ձգրելու սահմանային վիճակների: Այսպիսով՝ հոգևիճակների, օրգանիզմի առողջության, ֆունկցիոնալ հնարավորությունների փոփոխությունները հանգեցրել են մեր կողմից հերարգորված միջին և ավագ սերնդի անձանց բնավորության շեշրավորման:

Անձի գիրակցությունը ձնավորվում է ազգային, մշակութային, բարոյական և այլ արժեքների հեր ակրիվ շփման շրջանակներում: Դրանում ձնավորվում են անձի հայացքները, սկզբունքները, համոզմունքները: Մշրական կարիքների մեջ գրնվող անձը կախվածության մեջ է հանգամանքներից, այդ իսկ պարճառով նա ավելի շար կարնորում է կենցաղային, առաջնային պահանջմունքների բավարարմանը համարարասխանող արժեքներ: Նանգամանքներից կախվածություն ունեցող, աղքարության մեջ ապրող մարդկանց ապրելակերպը պայմանավորում է նաս նրանց գիրակցությունը, հայացքները, վերաբերմունքը միջավայրի, իրականության և ապագայի նկար-

մամբ: Բացասական վիճակների փրկանությունը մարդկանց բնավորության կառուցվածքում առաջացնում է սոցիալական երևույթների, մարդկանց, ձևավորվող հարաբերությունների նկատմամբ ընդգծված վերաբերմունք կամ շերտավորվածություն<sup>7</sup>: Շարունակական մխիթարություն, օգնություն հայցող մարդը դառնում է փնթփնթան, բողոքավոր: Նաճախ, իրերի բերումով, նա հայտնվում է բողոքավորների, ընդդիմախոսների, աղանդավորների շարքերում, քանզի այնպեղ հիմնականում իր դժվար հոգեվիճակում գտնվող մարդիկ են, այնպեղ նա է «գտնում» պահի համար իր պահանջմունքները բավարարող, իր հոգսերը «կիսող» համախոհներ: Այսինքն՝ մարդը հայտնվում է «յուրայինների» միջավայրում՝ հեռանալով, մեկուսանալով նախկինում իր ծավալած հանրօգուտ ակտիվ գործունեությունից:

Նկարագրությունները ցույց են տալիս, որ մեր համակազմի համար օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական փոփոխությունները, սոցիալ-հոգեբանական վարքի դրսևորումներն արտահայտվում են փուլային ձևերով:

Նկարագրության արդյունքների հիման վրա, ըստ մարդկանց օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների, առանձնացրել ենք 4 փուլ, որոնք ունեն հետևյալ բնութագրերը:

**Անորոշության փուլ.** փեղի ունեցող ղեպքերի, զարգացումների վերաբերյալ անձն ունենում է կցկտոր փեղեկություններ, նրան հայտնի չէ սրեղծված իրավիճակի պատճառը: Նման պայմաններում այսպիսի վիճակն ընդհանրական բնույթ ունի: Տարածված շշուկներն ու հաճախ ապակողմնորոշող փեղեկություններն անհանգստացնում, փագնապ են առաջացնում լայն գանգվածների շրջանում: Մարդը հայտնվում է լարվածության, անորոշության մեջ: Երևույթի գանգվածայնությունը, ստույգ փեղեկությունների բացակայությունը մղում են մարդուն իրավիճակից դուրս գալու ելք որոնելու, սակայն նա ներքին ուժերի, հնարավորությունների կենտրոնացում չի դրսևորում: Չունենալով հետագա գործողությունների կատարման հստակ ծրագիր՝ նա ենթագիտակցորեն ենթարկվում է պաշտպանական բնագղներին, որոնք

<sup>7</sup> Стів,яЛеонардЯКжАкцен23, ро"анниея, чнос2, жл хя1989,яс225х

այդ ժամանակամիջոցում բնականոն կերպով սրվում են<sup>1</sup>: Ժամանակի րևո-  
ղության և դրսևորման առումով դրանք անհատական բնույթ ունեն: Մյուս  
կողմից էլ՝ դրանց զանգվածային բնույթը, միևնույն ծրագրի, նպատակի,  
ինչպես նաև կատարվածի իմաստավորման համար ժամանակի բացակա-  
յության գործոնը, մարդկանց գործողությունները դարձնում են քառասյին,  
անկառավարելի: «Ժամանակի գործոնից կախված՝ հուզական ռեակցիան  
ձեռք է բերում շեշտակի զարգացման աֆեկտի կամ մնայուն փրամադրու-  
յան բնույթ, որը պահպանվում է ժամերով, օրերով, շաբաթներով»<sup>2</sup>: Սա խու-  
ճապի առաջին փուլն է, որն անկառավարելիության դեպքում կարող է  
մարդկանց մղել անկանխատեսելի գործողությունների: Նաճախ չհասկանա-  
լով իրենց հետ կատարվող երևույթի պատճառները, դրա հետևանքով առա-  
ջացած գայրույթը, արելությունը՝ կուրակված ներքին էներգիան մարդիկ  
կարող են զանգվածաբար ուղղել որևէ օբյեկտի: Լարվածության պարպ-  
ման անհրաժեշտությունը, սովորաբար, փնտրում է քաղության նոխազ:  
Սրա վրանգավորությունն այն է, որ հաճախ այսպիսի դեպքերում օբյեկտ  
են դառնում անմեղ կամ երևույթին չառնչվող անձինք կամ հանգամանքներ:  
Մյուս կողմից՝ կարող է նկատվել հոգեբանական փախուստ (անձի մեկու-  
սացում, միգրացիա, ասպարեզը թողնելու ցանկություն): Այս փուլի մեղմաց-  
ման, չեզոքացման գործընթացը պահանջում է անհրաժեշտ փրկելակարվու-  
յան և ժամանակի հատկացում: Սրանալով անհրաժեշտ փրկելակարվություն  
և այդ բոլորը վերլուծելու հնարավորություն՝ անձի մտք առաջանում է լար-  
վածության յուրօրինակ պարպում: Անմիջապես չեզոքանում են իրարամերժ  
մտքերն ու կասկածները: Անձն իր համար հայտնաբերում է լավագույն վճռի  
կայացման փարբերակը: Նա դառնում է սթափ, հավասարակշիռ, կառավա-  
րելիության առումով՝ պարբաստական:

**Երկրորդ փուլն** ակտիվ պաշտպանական գործողությունների փուլն է:  
Անձը հստակ պարկերացնում է իր հետ կատարվածը, միջավայրի փոփո-

<sup>1</sup> Տե՛ս, а ероняРЖАгресс, я,яі хяо h TeP,я1997,ясх193х

<sup>2</sup> Տե՛ս, b, льюнасѠжю с, холог, яяѠмоц, йжл жю h TeP,я2114,ясх278х

խությունները, ճշմարտացի գնահատում է սպեղծված իրավիճակն ու ձեռնարկում ինքնավերահսկման համապատասխան միջոցառումներ: Իրադարձությունների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության առկայությունը հնարավորություն է ընձեռում նույնիսկ դեպքերի հավանական զարգացման կանխարեւման, որի շնորհիվ անձն ապագա քայլերի հստակ ծրագրեր է մշակում՝ արտակարգ իրավիճակից դուրս գալու, դրանց զարգացումները կանխարգելելու, իր և մերձավորների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

**Երրորդ փուլին** բնորոշ է մարդկային և նյութական կորուստների, հոգեբանական, ֆիզիկական վնասվածքների վերագնահատումը, հաշվառումը: Մթափ մրաժողությանը հնարավորություն է ընձեռվում վերանայել իր հետ կատարվածը, դեպքերի ողջ ընթացքը, սեփական գործողությունների, արարքների ողջ շղթան և դրանցում սպրդած վրիպումներն ու սխալները: Կապված ծավալների ու կորուստների բնույթի հետ (մարդկային, նյութական, բարոյական արժեքների)՝ անձի մտք կարող է առաջանալ խղճի խայթի, մեղքի, մեղավորության զգացում, որը որոշ ժամանակ ծանրանում է նրա հոգում: Առանձին մարդկանց մտք կարող է դրսևորվել ինքնախարագանման, մեկուսացման, խորը հոգեճգնաժամային վիճակներ: Մյուս դեպքում, երբ կորուստներ չկան, կամ վրիպումներն ու սխալներն աննշան են, բարձրանում է անձի ինքնագնահատականը, իր հնարավորությունների նկատմամբ վստահությունը:

**Չորրորդ փուլին** աչքի է ընկնում անձի կողմից կորուստների հետևանքով առաջացած հույզերի վերապրմամբ: Դրանց պարպման դեպքում առաջանում է իրականության, կյանքի, ապագայի վերափնաստատվորում, վերաարժեքավորում: Այս փուլում հիշողության շնորհիվ անձը մանրամասն վերլուծում, «նշանավորում է» անցյալի իրադարձությունները, նորովի է գնահատում իր հետ կատարվածը, քանզի նա հավասարակշիռ հոգեկանով կարողանում է ապրել լիարժեք, «մարսել» այն մնացորդային ապրումները, որոնք ժամանակի սղության, վրանգի առկայության և այլ պարճառներով

չէր կարողացել լիարժեք ապրել, իրարեստրեն գնահատել կախարվածը: Սա ինքնամաքրման, ինքնակայացման կարևոր փուլ է: Այս փուլում անձն ավելի շար հակված է անցյալի սխալների վերլուծման, դասեր քաղելու, նոր համոզմունքներ ձևավորելու: Անձը հիմնվում է անցյալի փորձի, առաջացած նոր գաղափարների, կյանքի, իրականության վերախմաստավորման և վստահության վրա: Նա ակտիվորեն մշակում է կենսագործունեության իրականացման նոր ռազմավարական ծրագրեր: Անցյալի փորձը նրան ստոնասիրտ է դարձնում, բանիմաց, խոհուն ու հավասարակշռված: Այս փուլի անբարենպաստ ընթացքը, նոր խոչընդոտների առաջացումը կամ ժամանակի պակասը և այլ դժվարությունների առկայությունը կարող են բացասական ազդեցություն ունենալ երևույթների վերաարժեքավորման դրական գործընթացի վրա: Անձը կարող է կորցնել իր հնարավորությունների նկատմամբ վստահությունը: Իրականությունը կարող է թվալ դաժան և անելանելի: Կարող են ձևավորվել հավաստի կորստի, թերարժեքության զգացումներ, ֆրոստրացիայի վիճակներ, որոնք տարբեր ազդեցիվ վարքի ձևերով կարող են դրսևորվել միջանձնային հարաբերություններում: Առաջացած հոգևվիճակները կարող են ուղղվել մինչև անգամ իր անձի դեմ:

**Տինգերտորդ փուլը** հոգեկան ապրումներից, հիմնախնդիրներից զարված ակտիվ գործունեության փուլն է: Անձն այս փուլում հանդես է գալիս յուրօրինակ՝ վերածննդի ձևով: Անցած իրադարձությունները, հոգեկան ապրումները գնահատվում են որպես ռեալ կենսագրություն, ինքնաճանաչում: Ծնվում են ավելի իրարեստական գաղափարներ: Սահմանափակվում է դրդապատճառների բազմազանությունը, անձն ուշադրությունը կենտրոնացնում է որոշակի նպատակի վրա: Մտածողությունը դառնում է հստակ և սթափ, որոշումները դառնում են իրարեստական և որ ամենակարևորն է՝ իր հնարավորություններին համապատասխան: Իրադրությունների հավանական փոփոխությունների կանխատեսմանն ուղղված վերլուծությունները նրան դարձնում են գործնական և կյանքային: Անցյալի փորձը նրան դարձնում է սթափ, գործողությունները՝ հավասարակշռված:

Այսպիսով, 1998-2003 թվականների ընթացքում մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքում հանգել ենք մի շարք եզրակացությունների: Կարծում ենք, որ դրանց հաշվառումը հնարավորություն կտա մասնագետներին ոչ սպանդարտ իրավիճակներում կանխարգելելու և կառավարելու մարդկանց վարքը, ինչպես նաև ապահովելու նրանց ընդհանուր և հոգեկան առողջության պահպանման սոցիալ-հոգեբանական պայմանները:

1. Ժամանակակից սոցիալ-տնտեսական, քաղաքական բնականոն զարգացումները գույակցվում են անձի ընդհանուր և հոգեկան առողջությանն սպառնացող բազմաբնույթ սոցիալական, քաղաքական, տնտեսական դժվարություններով, որոնց հարմարվելու, դրանցում կենսունակ դառնալու համար պահանջվում են սրբեղծված պայմաններին համապատասխան` անձի օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների վերակառուցում, հարմարում:

2. Անբարենպաստ սոցիալ-քաղաքական, տնտեսական փոփոխություններն անդրադառնում են անձի հոգեֆիզիոլոգիական ոլորտի պաշտպանողական և հարմարողական հնարավորությունների բնականոն ընթացքի վրա` առաջացնելով բացասական հոգեվիճակների կայուն ֆոն, անձի բնավորության շեշտավորվածություն: Վերջիններս փոխակերպվում են նրա սոցիալ-հոգեբանական վարքագծում` կրելով զանգվածային բնույթ:

3. Մարդկանց մոտ դրսևորվող սոցիալ-հոգեբանական բացասական տեսչառությունները կրում են «սխալանշանների» արտահայտվածության փուլային բնույթ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բնորոշ բնութագրերը, հոգեֆիզիոլոգիական համակարգերում` ֆունկցիոնալ հնարավորությունների փոփոխություններում նկատվող օրինաչափությունները:

**Mels Mkrtumyan**  
**Doctor of Psychology**

**CHARACTERISTIC FEATURES OF SOCIAL-PSYCHOLOGICAL  
BEHAVIOUR OF THE POPULATION LIVING IN BORDERING  
REGIONS (ON THE EXAMPLE OF TAVUSH).**

The work deals with characteristic features of social-psychological behaviour of the population living in bordering regions in various conditions of life. The level of anxiety and neurotic-psychological tension, self estimation of happiness of people living in under tension are revealed. Through experiments it was proved that under the influence of negative psychic conditions the characteristics of social-psychological behaviour of people changes. Five stages of psycho-physiological, behavioural changes have been revealed, which differ from each other by their characteristics.



**ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**ՆՏ ՊԿ ակադեմիայի  
քաղաքագիտության ամբիոնի վարիչ,  
փիլիսոփայական գիտությունների թեկնածու**

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՆԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ  
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
(ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Ժողովրդավարացման երրորդ ալիքի շրջանակներում (հարկապես ԽՍՀՄ փլուզումից հետո) անցումային հասարակությունների քաղաքական ընտրանու (Էլիտա) ուսումնասիրման հարցը դարձել է քաղաքագիտության ուշադրության առարկա, որի շրջանակներում ընտրանու հավաքագրման (ռեկրուտացիայի) և շրջապայույտի (ռուտացիայի) գործընթացների փարբեր հայեցակետերը մի նոր գիտաճյուղի՝ ընտրանագիտության (Էլիտոլոգիայի) զարգացման հիմքն են: Չնայած դրան՝ ընտրանու փրեսության հետ կապված հասկացությունները, հարկապես անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացներում ընտրանու գործառույթները բնութագրելիս դրանց օգտագործման հնարավորությունները մինչ այժմ մնալով քաղաքական բանավեճերի կենտրոնում, ուսումնասիրվում են նաև անցումագիտության (փրանգիտոլոգիայի) կողմից [7]: Այդ պատճառով ներկայումս քաղաքական ընտրանու փրեսության կարեգորիալ ապարարի արժեքաբանորեն (աքսիոլոգիականորեն) չեզոք ճշգրտման անհրաժեշտություն է առաջանում, հարկապես անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացները վերլուծելու նպատակով: Սույն հոդվածում կդիտարկենք ընտրանագիտության հիմնարար հասկացություններից մեկի՝ «*ընտրանու հավաքագրման*» իմաստային հայեցակետերը, որոնց էությունը բացահայտելու նպատակով, նախ, կլուսաբանենք «*ընտրանի*» հասկացությունն ընդհանրապես:

\* \* \*

Ընտրանագիտությունը՝ որպես գիտաճյուղ, համակարգվել է XIX-XX դարերի սահմանագլխում: Այդ գիտաճյուղի հիմնական եզրույթի՝ «ընտրանու» հոմանիշ հանդիսացող «քաղաքական դասակարգ» հասկացությունը գիտական բառապաշար է ներմուծել իտալացի գիտնական Գ.Մոսկան, իսկ «ընտրանի» հասկացությունը սոցիոլոգիայի և քաղաքագիտության բառապաշարում հայտնվել է Վ.Պարեպոյի շնորհիվ: Մակայն ժամանակակից քաղաքական գիտության մեջ «ընտրանին»՝ որպես իշխող դասակարգի գործառությանին հեղազուտման ընդունված կարեգորհա, ինչպես նշում է Սարպորին, ներմուծվել է Ն. Լասուելի աշխատանքների միջոցով [10]:

Ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից քաղաքագիտության մեջ առկա են «ընտրանի» հասկացության մեկնաբանման էական տարբերություններ: Բայց որքան էլ որ էականորեն տարբերակվեն տվյալ հասկացության սահմանումները, դրանցից գրեթե յուրաքանչյուրն ընդգծում է «ընտրանուն» պարականոդ անձանց ընտրյալ լինելու հանգամանքը: Այնուհայտ է, որ քաղաքագիտական գրականության մեջ «ընտրանի» կարեգորհայի բովանդակության վերաբերյալ տեսակետներն իրարից տարբերվում են հիմնականում ընտրանու *հավաքագրման* և համապատասխան արժեքաբանական դրույթների իդեալական սկզբունքների նկատմամբ վերաբերմունքով. հեղազուտողներից ոմանք կարծում են, որ «ճիշտ» ընտրանին պետք է տարբերվի իր ծագման ազնվագարմությամբ, մյուսներն այդ շարքին են դասում ամենահարուստներին, դրսևորում երրորդ խումբը՝ հանրույթի առավել շնորհալի և մասնագիտական բարձր որակավորում ունեցող ներկայացուցիչներին, ովքեր, իրավիճակներով պայմանավորված, կարողանում են ոչ միայն որոշումներ կայացնել, այլև իրականացնել դրանք:

Այնուհանդերձ, տարբեր մեկնաբանությունները ենթադրում են համապատասխանություն, որը պայմանավորված է սոցիալական գիտելիքի այն ոլորտի առանձնահատկությամբ, որի շրջանակներում տարվում է հեղազուտությունը: *Մշակութաբանական* և *սոցիալ-փիլիսոփայական* մոտեցումներին առավելապես համապատասխանում է ընտրանու կազմի վերը նշված սահմանումներից վերջինը: Ժամանակակից *քաղաքագիտական* հեղազուտությունների համար առավել գործառնական (օպերացիոնալ) է ընտրանու՝ որպես իշխանության տիրապետող անձանց կարեգորհայի մեկ-

նաբանությունը՝ անկախ նրանից, թե որ գործոններն են պայմանավորում դրանց իշխանական դիրքը՝ ծագումը, ֆինանսական վիճակը, անձնական արժանիքները, թե ծառայության համար սրացած կարգավիճակը: Թվարկված գործոնները կարելի է անվանել *ընտրանիների տիպաբանացման չափանիշներ*:

Քաղաքակրթության փորձը վկայում է, որ ցանկացած հասարակության վերնախավ ընդգրկում է ընտրանու փարբեր խմբեր՝ տնտեսական, մշակութային, ռազմավարական, ռազմական, գիտական, լրարվական և բոլոր նրանք, ովքեր իրենց մասնագիտական աշխարանքով կայացնում են որոշումներ, ապահովում դրանց իրականացումը և հաշվեկոտ են հասարակության առջև: Այս կամ այն հասարակությանը ներհատուկ՝ ընտրանիների ընդհանուր կառուցվածքում հենց *քաղաքական ընտրանու* ունեցած դերի առանձնացման վերաբերյալ ժամանակակից գիտության մեջ լուրջ տեսական բանավեճ է ընթանում, որն այսօր, պայմանավորված գլոբալ քաղաքակրթության զարգացման առանձնահատկություններով, քաղաքական զարգացման ճգնաժամերով, «կենտրոն-ձայրամաս» փոխհարաբերություններով, աղքատ և հարուստ երկրների միջև առկա անջրպետով, հազիվ թե կարելի է ավարտված համարել:

Գիտահեղափոխական գրականության մեջ ձևավորվել է քաղաքական ընտրանու տեսական դիտարկման երեք մոտեցում՝ *դիրքային*, որը որոշում է այս կամ այն անձի քաղաքական ազդեցության աստիճանը՝ ելնելով իշխանության համակարգում նրա դիրքից (այս մոտեցման համաձայն՝ ընտրանի են նախնառաջ համարվում կառավարության, խորհրդարանի անդամները և այլք), *վարկանիշային*, որը հիմնված է փորձագիտական գնահատականների միջոցով քաղաքական գործչի վարկանիշի բացահայտման վրա, *ռազմավարական*, որը հիմնված է *ռազմավարական որոշումներ ընդունող* անձանց առանձնացման վրա [15, p. 15]:

Փաստորեն առաջինը՝ դիրքայինը, չափազանց ձևական է թվում՝ միայն վարկանիշային իշխանությամբ օժտված անձանց դերի հնարավոր չափազանցումների և, հակառակը, «սովերային» դեմքերի հզոր քաղաքական ազդեցությունն անտեսելու պարճառով. ընտրանու առանձնացման այսպիսի եղանակի ընտրությունը հղի է նաև անճշտությամբ՝ իրենց վարկանիշային կարգավիճակով հավասարազոր գործիչների իրական քաղաքական ազդեցությունը որոշելիս:

Իր հերթին, վարկանիշային վերլուծությունը լայնորեն կիրառվում է մասնավորապես, փորձագետների կողմից հեփտորհրդային փարածքներում (նաև Նայաստանում) առաջադարձ քաղաքական գործիչների վարկանիշները կազմելիս: Գիտական նպատակով վարկանիշային մոտեցումն օգտագործելու բավական արդյունավետ օրինակ կարող է ծառայել ամերիկացի հեփագործ Շ. Ռիվերայի աշխատանքը Ռուսաստանի հեփտորհրդային ընտրանու ձևավորման միտումների մասին [9, էջ 61-66.]: Սակայն վարկանիշային մեթոդի կիրառման ղեկքում հավանական է վերլուծաբանի մեծ կախվածությունը փորձագետների սուբյեկտիվ կարծիքներից, ինչը նույնպես չի նպաստում հեփագոփությունների արդյունքների հուսալիությանը:

Ելնելով ժողովրդավարական անցման գործընթացում քաղաքական ընտրանու գործառնության առանձնահատկություններից՝ նպատակահարմար ենք համարում կարևորել երրորդ մոտեցումը: Փաստենք, որ այդ մոտեցման համաձայն, *քաղաքական ընտրանին ներառում է ռազմավարական կարևոր որոշումներ ընդունող անձանց*: Այս մեթոդի առավելությունը պայմանավորված է նաև հեփայլ հանգամանքով. դրա հիմքում դրված է իշխանություն երևույթի այնպիսի մեկնաբանություն, որն առավել համապատասխան է հենց քաղաքական ընտրանու ուսումնասիրմանը՝ ի փարբերություն քաղաքական լիդերության հեփագոփման: Վերջին ժամանակներս քաղաքական գիտության մեջ ձևավորվել է իշխանության մեկնաբանման երկու եղանակ՝ *անձանց վրա ազդելու* ունակություն և որպես *որոշումների ընդունման վրա ազդելու* ունակություն: Եվ եթե քաղաքական լիդերության փեսությունը [3, էջ 395] կարող է ելնել իշխանության երկու մեկնաբանություններից, ապա քաղաքական ընտրանու հեփագոփումը հենվում է առավելապես դրա երկրորդ մեկնաբանման վրա (նշենք, որ, մեր կարծիքով, նման փարբերակումը պայմանական է):

Գիտական գրականության մեջ քաղաքական ընտրանու հավաքագրման և գործառնման առանձնահատկությունները նկարագրելիս քաղաքագետներն առանձնացնում են ազդեցության փարբեր եղանակներ՝ *ուղղակի, անուղղակի և անվսնակական*: *Ուղղակի* ազդեցություն է կոչվում այս կամ այն անձի անմիջական մասնակցությունը վերջնական որոշման կայացմանը. *անուղղակի* ազդեցություն են գործում վերջնական որոշում կայացնող մարդու վրա այլ անձինք, թեկուզ հենց իր ընտանիքի անդամները: Ինչ վե-

րարերում է *անվանական* ազդեցությանը, ապա քաղաքագետ Ռ.Փարթենյնը, վերլուծելով հեփիտորիդային փարածքում քաղաքական ընտրանու հավաքագրման գործընթացները, նշել է, օրինակ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամի քաղաքական կշիռը [15, էջ 78]: Նեց անուղղակի ազդեցության նշանակալիության պատճառով և՛ տեսության, և՛ ժամանակակից քաղաքական պրակտիկայում քաղաքական ընտրանու ճշգրիտ ձևակերպումը պետք է հաշվի առնի ոչ միայն որոշակի անձանց մասնակցությունը որոշումների կայացմանը, այլև կողմնակի որևէ մեկի հնարավոր՝ դրական կամ բացասական ազդեցությունն այդ գործընթացի վրա:<sup>1</sup>

Նարկավոր է նկատի ունենալ, որ ընտրանին միայն կարևորագույն որոշումների մշակմանն այս կամ այն կերպ ներագոյող անձանց թվաքանակն գումարը չէ: Ըստ քաղաքագետ Պ. Բախրայի՝ «արդի ժողովրդավարության համար սկզբունքային է ոչ այնքան որոշումների ընդունման գործընթացում լիազորությունների պատվիրակումը կամ դրանց կենտրոնացման չափը, այլ ավելի շուրջ ժողովրդավարական կառավարման բազային այնպիսի սկզբունքներին հետևելու աստիճանը, ինչպես, օրինակ, քաղաքական հավասարությունը, բանավեճի ազատությունը, փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը, ազատ և պարբերական ընտրությունները և այլն»: Այս բազային սկզբունքներին հետևելով՝ *ընտրանին դատնում է ժողովրդին հաշվելու և պարտավոր է շարքային քաղաքացիների շահերին համապատասխան որոշում ընդունել:*

Նեց այս նկատառումներով էլ քաղաքագետ Սարգոսին մշակեց հարուկ մոդել «որոշման ընդունման ժողովրդավարություն» կամ «որոշակի ժողովրդավարություն» անվանմամբ: Նամաձայն ժողովրդալիքիստական տեսության, որոշումների ընդունման իդեալը (ելակետը Մ.Վերերի «իդեալական փիլի» տեսությունն է) պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝ 1) յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա միատեսակ կշիռ (ընտրողը միշտ ճիշտ է), 2) գերակայությունները պետք է հաշվի առնել միանշանակորեն (հանրային շահը համընդհանուրի բարիքն է), 3) մասնակիցների որոշման

<sup>1</sup> Այսպիսի մոտեցման համաձայն Պ.Բախրայը հիմնավորված նշում է, որ քաղաքական իշխանությունը կայանում է ոչ միայն կարևոր խնդիրների լուծմանը մասնակցելու, այլև դրանց հարցադրմանը խոչընդոտելու մեջ:

արդյունքները պետք է համապատասխանեն իրականությանը, 4) բարձր ռիսկերը և որոշում կայացնելու հետ կապված ծախսերը հասցնել նվազագույնի:

Ընտրանի կարող ենք անվանել արժեքային կողմնորոշիչների, կարծրատիպերի և վարքագծի կանոնների ընդհանրությամբ միավորված առանձնահատուկ, թեև տարակազմ սոցիալական շերտը: Ընդ որում, վարքագծի չափանիշները՝ իրական և հռչակվող, կարող են էականորեն տարբերվել: Ընտրանու ներքին համախմբվածության աստիճանը պայմանավորված է նրա սոցիալական և ազգային համասեռությամբ, ընտրանու հավաքագրման գործընթացում առկա գերակշռող մոդելներով, քաղաքական առաջնորդի կառավարման ոճի գերակայությամբ և այլն: Ներկայումս, հասարակության մեջ էլիտար խմբերի հոգնականությունը, որքան էլ որ զգալի լինի դրանց քանակությունը, ամենևին էլ չի հակասում ընտրանու ներքին ինտեգրվածության մասին պարկերացմանը:

Այնուհայտ է, որ քաղաքական ընտրանին բազմագործառությամբ կարգավիճակ ունի, և ընտրանու գործունեության առանձնահատկություններով էլ պայմանավորված՝ որոշվում է նրա բնույթը: Քաղաքական ընտրանին միաժամանակ քաղաքական գործընթացի, կանխարեսման, ռիսկի, հանրային և պետական կառավարման արժեքաշահային համակարգի, երկխոսության, կայունության կրողն ու արարողն է:

Ներխորհրդային տարածքում ժողովրդավարացման գործընթացը վկայում է, որ քաղաքական ընտրանու օգտագործելիք ռեսուրսները պարտադիր չէ, որ իրենց բնույթով քաղաքական լինեն: Քաղաքական ընտրանիների ռեսուրսային ներուժը վերլուծելիս ելակետային ենք համարում Ֆրանսիացի սոցիոլոգ, քաղաքագետ Պ. Բուրդյեի կարարած բազմաչափ սոցիալական տարածության տեսական նկարագրությունը, որի շրջանակներում միաժամանակ գործում են տնտեսական, սոցիալական, խորհրդանշական, մշակութային<sup>1</sup> կապիտալի տիրապետող անհատներ: Այս կամ այն տարատեսակի կապիտալը կարող է անվանվել քաղաքական, երբ այն ազդեցություն գործելու նպատակով ներգրավված է քաղաքական որոշումների կայացման

---

<sup>1</sup> Կապիտալների թվարկված տեսակներին կարելի է ավելացնել ևս մեկը՝ ուժայինը, որի տիրապետումը, ցավոք, ժողովրդավարական անցման գործընթացում գրեթե հետխորհրդային երկրներում ազդեցության էլ ավելի նշանակալի գործոն է դարձել:

գործընթացում, զգում է զբաղեցրած սոցիալական փարածքը և իրեն թույլ է փայխ ասել. «Սա ինձ համար չէ, իմ սահմանը չէ» [5]:

*Քաղաքական ընտրանին* ներքուստ համախմբված, հասարակության փոքրամասնությունը կազմող սոցիալական շերտ է, որը կարևորագույն ռազմավարական որոշումների նախապարաստման ու ընդունման սուրյեկտ է և փիրապետում է դրա համար անհրաժեշտ ռեսուրսային ներուժի: Սակայն, ինչպես նշում է Ֆրանսիացի քաղաքագետ Ռ. Բուդոնը, «Լեթն ընտրանին ռեսուրսների ավելցուկի է փնտրվում», ապա նա «հակված է դա օգտագործել սպառման, այլ ոչ թե ներդրումներ կատարելու նպատակով» [4, էջ 99]:

Ընտրանու փեսակագոյացնող հատկանիշը սահմանադրող կարևորագույն *գործառույթն է* ռազմավարական որոշումների մշակումն ու ընդունումը և զանգվածային գիտակցության ու վարքագծի մակարդակի բարձրացումը, նոր արժեքների ներմուծման գործընթացի կանոնակարգումը և դրանց հեռարձակման ապահովումը: Քաղաքական ընտրանու հավաքագրման ուղիների ուսումնասիրման համար անհրաժեշտ է ժամանակակից հասարակության իշխանական ուղղահայացը ներկայացնել եռամակարդակ բուրգի փեսքով. վերևի մակարդակն զբաղեցնում է կառավարող ընտրանին (ընտրանիները), միջինում են հայտնվում «վերևում» ընդունվող որոշումների հեռարձակումն իրականացնող քաղաքական խմբերը, իսկ բուրգի հիմքն է կազմում կառավարման օբյեկտը հանդիսացող բնակչությունը: Արդեն XX դարի սկզբում Օ. Շպենգլերը, բնութագրելով զանգվածային հասարակության մեջ իշխանության բաշխումը, գրում էր. «Ամեն ինչ որոշում են հզոր ուղեղի փեր մարդկանց փոքրաթիվ խմբերը, որոնց անունները, միգուցե, նույնիսկ չեն դասվում հայտնիների շարքը, իսկ երկրորդ կարգի քաղաքական գործիչների, հոնկորների, բանախոսների, պարզամտերների և լրագրողների, գավառական ներկայացուցիչների հսկայական զանգվածը ներքևի շերտերում միայն պաշտպանում է ժողովրդի ինքնորոշման պատրանքը» [11, էջ 74]: Փաստորեն, սոցիալական բուրգի հիմքի՝ դրա գագաթի վրա հեղադարձ ազդեցության հնարավորությունը պայմանավորված է որոշակի հանգամանքներից՝ քաղաքական մշակույթի առանձնահատկություններով, քաղաքական արդիականացման պատմական ավանդույթներով, քաղաքական զարգացման ճգնաժամերը կանխելու փորձերով, քաղաքական վարչակարգի փեսակներով, իրականացվող ժողովրդավարական բարեփոխումների

բնույթով և այլն: Ակնհայտ է, որ այն հասարակության մեջ, որտեղ գերակայում է հայրիշխանական կամ հպարակային (patrian potestas culture) քաղաքական մշակույթը, ընտրանու որոշումների վրա ազդելու՝ արտաէլիտային շերտերի ունակությունն էականորեն ցածր է, քան մասնակցային (participatory) մշակույթի գերակայության դեպքում:

Սակայն ակնհայտ է, որ ընտրանու և զանգվածների միջև բաժանարար գծի ուրվանկարը՝ բացի քաղաքական մշակույթի առանձնահատկություններից, որոշվում է նաև այլ գործոններով՝ քաղաքական լիդերության փոփոխություն, հասարակության մեջ քաղաքական ուժերի որոշակի դասավորվածությամբ, ժողովրդավարական արժեքների կայունության մակարդակով, քաղաքական արդիականացման բնույթով, ազգային մտահայեցողությամբ և այլն: Նման բազմագործառնության վերլուծության շրջանակներում անցումագետ Զ.Նիգլիի շնորհիվ ուսումնասիրվել է էլիտային խմբերի՝ արտաէլիտայինների վրա ազդեցության շնամային արժեքների՝ ավանդական հասարակության մեջ սրբազան արժեքների նկատմամբ փրամադրվածությունը և ժամանակակից հասարակության մեջ առօրյա փոփոխական շահերից վերջիններիս կախվածության փաստարկված հիմնավորումը [13]:

Ընդունելով Նիգլիին՝ այնուհանդերձ շեշտենք, որ ընտրանու հավաքագրման ուղիներից մեկն էլ նրա այս կամ այն հատվածի՝ որոշումների կայացման գործընթացի վրա ազդեցության ինստիտուցիոնալացման աստիճանն է: Նմանօրինակ մտքեցման համաձայն կարող ենք նշել, որ ընտրանին կազմված է երկու բաղադրիչներից, որոնք պայմանականորեն կարելի է անվանել «*առաջնորդներ*» և «*բյուրոկրատիա*»: Բյուրոկրատիան ընդգրկում է բոլոր մակարդակի վարչական ղեկավարներին և պետական կառավարման մարմիններում մշտական վճարովի պաշտոններ զբաղեցնող անձանց: Ռուս քաղաքագետ Օ.Գաման-Գոլուբովինան, անդրադառնալով այս հարցին, այն կարծիքն է հայտնում, որ «առաջնորդներ կարելի է համարել քաղաքական ոլորտում պրոֆեսիոնալ գործող և որոշումների կայացման վրա մեծ ազդեցություն ունեցող, բայց իշխանական կառույցներում պաշտոններ չունեցող անձանց: Նրանց շարքը կարող են դասվել քաղաքական կուսակցությունների ղեկավարները, ազդեցիկ մրավորականները, ՋԼՄ-ների առանցքային դեմքերը» [6, էջ 100]: Հիմնականում համաձայնվելով հեղինակի հետ, այնուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ հատկապես



ժողովրդավարական անցման գործընթացներում միայն իշխանական կառույցներում պաշտոններ չունեցող անձինք չէ, որ կարող են ազդել որոշումների կայացման վրա: Ընդհակառակը, խիստ անհրաժեշտ է, որ իշխանական կառույցներում ներգրավված անձինք հնարավորություն ունենան ազդեցություն գործելու ռազմավարական կարևոր որոշումների կայացման վրա:

Նանրագումարենք: Ժամանակակից զարգացած երկրների քաղաքական ընտրանու ռազմավարական նշանակություն ունեցող գործունեության փորձը վկայում է նրա երկշերտության մասին. այն բաղկացած է մտածող (ինտելեկտուալ-ռազմավարական) և կատարող (վարչարարություններով) խմբերից: Այս առումով ընտրանու գործունեության չափանիշ է դառնում որոշակի սոցիալական և էթնոմշակութային հիմքերի վրա ձևավորված գաղափարախոսությունն ու այս իրականացնելու ընդունակությունը: Ժողովրդավարական անցման գործընթացում կառավարելիս ընտրանին, որոշակի գաղափարախոսության (դիցուք՝ ազատական-ժողովրդավարական) հիմքի վրա մոդելավորում է իր քաղաքական վարքաբանությունը և գիտակցությունը:

\* \* \*

Ընտրանագիտության (էլիտոլոգիայի) մեջ ընտրանու *հավաքագրման առանձնահատկությունների* հարցը հիմնարար տեղ է զբաղեցնում: Ի տարբերություն մասնագիտական էլիտար հանրությունների՝ քաղաքական ընտրանին բաց համակարգ է: Նախուկ մասնագիտական պատրաստվածություն չունեցող չափահաս մարդը, որպես կանոն, չի կարող որոշակի պաշտոնի (նաև կարգավիճակի) հավակնել համապատասխան մասնագիտական ընտրանիում, մինչդեռ քաղաքական ընտրանու շրջանակը համալրվել և համալրվում է տարբեր կրթական, մասնագիտական, գույքային և մտավոր կարգավիճակ ունեցող անձանց հաշվին (խսկ ճգնաժամային ժամանակաշրջաններում՝ նաև մարզինալ շերտերի ներկայացուցիչների հաշվին): Այսպես, հայրնի հոլիվուդյան դերասան Ռ.Ռեյզանը քաղաքական գործիչ դարձավ հասուն տարիքում, ինչը չխանգարեց նրան քաղաքական գլխավորությամբ առաջխաղացման հասնել, երկու անգամ ընտրվել ԱՄՆ նախագահ և «ռեյզանոմիկա» քաղաքականության շնորհիվ հաղթել «սառը պատերազմում»: Քաղաքականության «բացության» գլխավոր պատճառը, մեր կարծիքով, պայմանավորում է տվյալ երևույթի հիմնարար հատկանիշը՝ *համընդհանրությունը*. այստեղ տեղի ունեցող բախումները ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, սոցիալական, ազգային, հոգևոր և այլ հա-

կատությունների արտահայտման ձև են: Ուստի քաղաքական ընտրանու շարքերը կարող են համալրել փարբեր սոցիալական, կրթական և այլ կարգավիճակ, փարբեր մասնագիտություններ, փարբեր արժեշահային համակարգ ունեցող մարդիկ:

Նենց այսպես էլ պերք է փարբերակել «բաց» (անտրեպրենյորային-ձեռնարկչական) և «փակ» (գիլդային) ընտրանիները՝ կախված այն գնահատականից, թե ինչպես է իրականացվում դրա կազմի շրջապտույտն արտաելիքային շերտերի ներկայացուցիչների հաշվին: Ընտրանին փակ է, երբ հավաքադումը տեղի է ունենում ինքնավերտարադրվող շրջանակում, այսինքն՝ խիստ սահմանափակ է նրա ձևավորման սոցիալական բազան, ընտրասերումը (սելեկցիան) կատարվում է գերիշխող կամ էլ նրանց մտք կանգնած սոցիալական խավերից: Ընտրասերում կատարող անձանց թիվը խիստ սահմանափակ է և, ամենակարևորը, կառավարման գործընթացին բնորոշ է միարժեքության սկզբունքը: Ընտրանին բաց է, եթե ապահովվում է ընտրագանգվածի լայնածավալ մասնակցությունն ընտրանու հավաքագրման գործընթացին և ապահովելով փարբեր սոցիալական շերտերի ներկայացուցիչների մտքը՝ ենթադրում է հոգնականություն:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հասարակության (որպես համակարգ) տեսակի (բաց կամ փակ) և ընտրանու շրջապտույտի միջև միանշանակ փոխկախվածություն գոյություն չունի. արտաքին աշխարհից հասարակության փակվածությունը ինքնին դեռ չի վկայում ընտրանու հավաքագրման փակ բնույթի մասին: Այսպես, չնայած խորհրդային հասարակությունն սկնհայտորեն փակ էր՝ ընտրանու հավաքագրումը վաղ խորհրդային ժամանակաշրջանում՝ արտաելիքային շերտերից բավական ուժգին շրջապտույտի շնորհիվ բնորոշվում էր բացությամբ: Եվ, հակառակը, հասարակության բացությունը և ընտրանու կազմակերպման հոգնական բնույթն ամենին էլ հարյուր տոկոսով չեն երաշխավորում ընտրանու հավաքագրման նմանատիպ բնույթը: Ընտրանու ձախ ազատական դպրոցի ներկայացուցիչ, ամերիկացի քաղաքագետ Չ. Միլսի համախոհ Մ. Մարջերը ԱՄՆ ընտրանիների կառուցվածքավորման առանձնահատկությունների ուսումնասիրման օրինակով ցույց տվեց, որ չնայած ամերիկյան հասարակության ընտրանու կազմակերպման հոգնականությանը՝ ամերիկյան ընտրանու հավաքագրման համակարգը «աննշան է բաց նրանց համար, ովքեր ցածր սոցիալական

կարգավիճակ ունեն»։ Այս հեղինակը նկարագրել է ընտրանին՝ որպես համակարգ, որի կազմը լրացվում է դրա հավանական միավորումից։ Ընտրանու յուրապետակ պահեստը են կազմում այնպիսի հատկանիշներով օժտված անհատները, ովքեր փվյալ համակարգի շրջանակներում առաջնորդության համար անհրաժեշտ են ճանաչվում։ Ընտրանու միավորման ներսի թեկնածուների միջև առկա է մրցակցություն, սակայն նրանց համար ամենակարևորն ընտրանու պահեստում հայտնվելն է [14, էջ 207]։

Մենք քաղաքական ընտրանու *հավաքագրման կառուցակարգեր* ենք անվանում դրա կազմի մեջ նորակոչիկների առաջադրման *սկզբունքները*, որոնք անխուսափելիորեն փարբերվում են՝ նայած հասարակական կառուցվածքին և պատմական դարաշրջանին. այդպիսի սկզբունքներ էին արյունակցական կապը, ժառանգությունը, սեփականության փիրապետումը, մասնագիտական իրազեկության մակարդակը, կուսակցական պարկանելությունը, անձնական նվիրվածությունը, ավագությունը կամ երկարամյա ծառայությունը, հովանավորությունը և այլն։ Այս նկատառումներով էլ անհրաժեշտ է ընդգծել, որ հավաքագրման գերիշխող կառուցակարգերի առանձնահատկությունները միշտ չէ, որ համահարաբերակցվում են հասարակության բաց կամ փակ լինելու, կամ էլ ընտրանու հավաքագրման յուրահատկության հետ։ Այսպես, խորհրդային *փակ* հասարակության մեջ ընտրանու՝ իր բնույթով հիմնականում *բաց* հավաքագրումն իրականացվում էր առավելապես *փակ* կառուցակարգերի միջոցով (այստեղ կարելի է հիշել, ընտրության «նոմենկլատուրային» սկզբունքը, երկարամյա ծառայության անհրաժեշտությունը, բազմաթիվ ինստիտուցիոնալ գրիչների առկայությունը, այնպիսի գործոնների հաշվառումը, ինչպիսին են, օրինակ, սոցիալական ծագումը, կուսակցականությունը, փարիքը, աշխատանքային ստաժը)։ Այդ առանձնահատկությունները, մեր կարծիքով, պայմանավորված են նրանով, որ «վազող» արդիականացման պայմաններում կառավարչական ապարատի առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով ընտրանու հավաքագրման փակ կառուցակարգերը կոչված էին նպաստելու արտաէլիտային շերտերի հաջող մրցակցությանն ակնհայտ առավելություններ ունեցող ընտրանու շրջանակից դուրս եկածների հետ։

Դիտարկենք ընտրանու տեսության ևս մեկ հասկացություն։ *Տավաքագրման ուղիներ են* կոչվում դեպի քաղաքական պաշտոնակարգության գագաթ փանող ճանապարհները։ Ընդունված է այս կարգի հիմնական

ինստիտուցիոնալ ուղիների շարքին դասել պետական ապարատը, տեղական ինքնակառավարման մարմինները, բանակը, քաղաքական կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, կրթության համակարգը: Այս կամ այն ուղու գերակայումը պայմանավորված է քաղաքական արդիականացման պատմական ավանդույթներով, քաղաքական վարչակարգի առանձնահատկություններով և այլն:

Ընդհանուր հավաքագրման այս կամ այն ուղիների արդյունավետության համադրման համար հեղափոխությունը նյութ է տալիս Ռ.Փաթենեմի «Քաղաքական ընդհանուր համեմատական հեղափոխություն» աշխատանքը [15]: Փաթենեմը ցույց է տալիս, որ քաղաքական կուսակցությունների դերը իշխանության բարձրագույն օղակների ձևավորման գործում նշանակալից է շարքային երկրների խորհրդարանական վարչակարգերում և երրորդ աշխարհի երկրներում:

Բյուրոկրատական ապարատն ընդհանուր հավաքագրման գործընթացում կարևոր դեր ունի հիմնականում զարգացող երկրներում, սակայն, ըստ Ռ. Փաթենեմի, Գերմանիայի, Ճապոնիայի, Շվեդիայի նման զարգացած երկրներում իշխանության բարձրագույն օղակներում տեղ գրառնելու քաղաքական ընդհանուր զգալի մասն իր դիրքով պարտավոր է հենց պետական ծառայությանը: Տեղական ինքնակառավարման համակարգում է աշխատել ԱՄՆ, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրիայի խորհրդարանների պարզամավորների մեծամասնությունը: Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ քաղաքական համակարգերի համար համեմատական առումով բնորոշ են պետական ծառայության՝ որպես քաղաքական ընդհանուր հավաքագրման ուղու հարաբերական ուշ ինստիտուցիոնալացումը և այդ ոլորտում աշխատանքային սրածի թույլ ազդեցությունը իշխանության բարձրագույն օղակների ձևավորման վրա: Լրացնելով Ռ. Փաթենեմին, Ջ. Նիգլին ուսումնասիրել է հեղափոխության վարածքում քաղաքական ընդհանուր հավաքագրման գործընթացը, եկել է այն եզրակացության, որ Ռուսաստանում պետական ծառայությունն ավանդականորեն անվիճելի, մրցակիցներ չունեցող «առաջատար» է մյուս ուղիների շարքում: Նամաձայնելով Ջ. Նիգլիի հետ՝ նշենք, որ նման իրավիճակ է առկա նաև Նայաստանում:

Ըստ Ռ. Փաթենեմի՝ երբևէ ընդհանուր հավաքագրման ուղիների շարքում աչքի են ընկնում որոշ ազդեցիկ սոցիալական ինստիտուտները, օրինակ,

կրոնական կազմակերպությունները և արհմիությունները: Լապինական Ամերիկայի մի շարք երկրներում (Բրազիլիա, Արգենտինա, Պերու) քաղաքական պաշտոնակարգության բարձրագույն օղակների լրացման էական աղբյուր է բանակը: Ավանդաբար զինվորական ծառայությունը հաջող քաղաքական ապագայի գրավական է համարվում նաև Իսրայելում և Թուրքիայում: Իսրայելի վերջին չորս վարչապետերն իրենց քաղաքական առաջխաղացման համար պարտական են բանակում և հատուկ կազմավորումներում հաջող ծառայությանը: Թուրքագետ Մ. Մելքոնյանը նշում է. «Թուրքիայում բանակը հանդես է գալիս որպես կարևորագույն հասարակական-քաղաքական գործոն և փիրապետում է երկրի քաղաքական կյանքի վրա ներազդելու բավականաչափ լծակների» [1]: Այդ գործոնի հատուկ տեղը պայմանավորված է նրանով, որ բացի սպայակազմի ընկերության և կրթության գործառույթն իրականացնող ինստիտուտից, բանակը նաև կառավարման սկզբունքների ուսուցման, հայրենասիրության դաստիարակման և անձի սոցիալականացման կարևորագույն դարբնոց է:

Քաղաքակրթության փորձը վկայում է, որ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում ճանապարհը դեպի քաղաքական պաշտոնակարգության զագաթ անցնում է նաև կրթական համակարգի միջով: Ավելին, զարգացած ժողովրդավարության երկրներում (նախևառաջ Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում) կրթությունն այնքան նշանակալից դեր է խաղում, որ նրա ու էլիտային հավաքագրման համակարգի միջև փարբերությունը փաստորեն ջնջվում է: Պարահական չէ Վեյնգրոնի դուքսի թևավոր խոսքն այն մասին, որ Վաթերլոոյի ճակատամարտի հաղթանակը նվաճվել է Իտոնի մարզահրապարակներում: Մեծ Բրիտանիայի մի քանի փասնյակ հազար դպրոցներից միայն փոքր մասն է պարկանում «հանրային դպրոց» (public school) դասին. այսպես ուսանում է դպրոցականների ընդհանուր թվի մոտ 5%-ը, սակայն հենց այդ ուսումնական հաստատություններն են (դրանց մեկ երրորդն ամենահարգելի և հեղինակավորն են երկրում, իսկ ընտրանու ընտրանին կազմում են Իտոնը, Վինչեսթերը, Ռեգրին, Նարրոուն)՝ քաղաքական ընտրանու վերարտադրության հիմնական դարբնոցները: Նկարագրվող դպրոցներից մի քանիսն աչքի են ընկնում ժառանգականության բարձր աստիճանով, ինչը համապատասխանաբար նպաստում է ընտրանու փակվածությանը, նրա ինքնավերարտադրությանը (օրինակ՝ Իտոնի դպրոցականների երկու երրորդը կազմում է փվյալ ուսումնական հաստատության

շրջանավարտների ուղիները, իսկ դրա «պատերից» 18 վարչապետ է դուրս եկել): Ընտրանու վերաբարդության բրիտանական համակարգի երկրորդ օղակը Քեմբրիջի և Օքսֆորդի բուհերն են:

Ֆրանսիայում նույնպես կրթությունը գերակշռող դիրք է զբաղեցնում դեպի բարձրագույն վարչական օղակ փանող ուղիների մեջ: Նամապարասխան ուսումնական հասարակություն (օրինակ՝ պերական կառավարման (ադմինիստրացիայի) ազգային ակադեմիա, որի շրջանավարտներին այսպետը անվանում են «էնարխներ»՝ դպրոցի անվան ֆրանսերեն հապավմանը համապարասխան) ընդունվողի համար երաշխավորված է կառավարիչների բարձրագույն շերտ մտնելը և պերական ապարատում հեղինակավոր աշխատանքը: Ինչպես գրում է ժամանակակից քաղաքական ընտրանու ֆրանսիացի հեղափոխող Դ.Պինյոն, պերությունը Ֆրանսիայում «փաստորեն մենաշնորհված է իր պերական ընտրանու կողմից» [8, էջ 182]: Ընդ որում, քաղաքական ընտրանու հավաքագրումը Ֆրանսիայում սահմանափակված է ժամանակային շրջանակներով. յուրաքանչյուր թեկնածու միայն մեկ անգամ կարող է բախարը փորձել, քանի որ քննական գրիչը չանցածները հնարավորություն չունեն ևս մեկ անգամ հաջողության հասնելու փորձ անել:

Ակնհայտ է, որ ընտրանու *հավաքագրման ուղիների ներթափանցելիության* կարեգորիան ենթադրում է հավաքագրման փարբեր ուղիների համակարգում քաղաքական ընտրանու անդամների հորիզոնական փեղաշարժ: Ամերիկացի քաղաքագետներ Ռ. Փաթենմի, Տ. Դայի, Ջ. Փիբերինգի և Ռ. Դալի հեղափոխությունները ցույց են փալիս, որ ԱՄՆ-ին հարուկ է հավաքագրման ուղիների ներթափանցելիության բարձր աստիճանը: Որպես կանոն, կառավարչական ապարատի բարձրագույն օղակը համարվում է գործարարության և կրթության փարբեր մակարդակների անձանցով, ովքեր պարտավոր են լքել պաշտոնական Վաշինգտոնը հերթական ընտրություններից հեղո և կարող են վարչակազմ վերադառնալ, երբ կրկին երկրի գլխավոր ղեկավար է դառնում իրենց կուսակցության առաջադրած թեկնածուն: Ամերիկյան բարձրագույն բիզնեսի գրեթե կեսն այս կամ այն ժամանակաշրջանում աշխատել է կառավարական կարևոր պաշտոններում, իսկ վեց կառավարական պաշտոնյաներից հինգի պաշտոնական առաջխաղացման հաջողությունները նվաճված են եղել մասնավոր հարվածում [15]: Այս

առումով հատկանշական է Ջ. Բուշի կենսագրությունը, ով քաղաքականություն եկավ՝ լինելով խոշոր գործարար-նավթարդյունաբերող [12]:

Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ ընտրանու հավաքագրման այլ կառուցակարգեր են առկա Ֆրանսիայում, որտեղ գրեթե բացակայում են «պտուղող դռներ» պետական ապարատի և խոշոր բիզնեսի միջև, ճանապարհը բաց է միայն մեկ ուղղությամբ. կառավարական պաշտոնյաները պետական ծառայության ավարտից հետո կարող են առաջադարձ դեկավար պաշտոններ զբաղեցնել մասնավոր բիզնեսում, սակայն շարժումը հակառակ ուղղությամբ համարվում է աննպատակահարմար:

Նավաքագրման ուղիների ավելի մեծ ներթափանցելիության օգտին փոփոխություններ են տեղի ունենում նաև ժամանակակից հայ իրականության մեջ. կարելի է խոշոր գործարարների՝ պետական իշխանության կառույցներ մտնելու բազում օրինակներ բերել: Եվ, հակառակը, պաշտոնաթող բարձրագույն պաշտոնյաները հաճախ իրենց աշխատանքային գործունեությունը շարունակում են մեծ բիզնեսի համակարգում: Այսպես, ՏՏ նախկին վարչապետ Ն. Բագրատյանը ներկայումս զբաղեցնում է Երևանի կոնյակի գործարանի (բաժնեգրույնները պատկանում են Ֆրանսիական «Պեռոն Ռիկար» ընկերությանը) գործադիր փոխնախագահի պաշտոնը, իսկ նախկին արագործնախարար Վ. Փափազյանը՝ նույն գործարանի միջազգային կապերը համակարգող սպորտաբաժանման ղեկավարն է: Նմանապիպ միտումներ են առկա նաև հեղինակների պարադքում ձևավորված մյուս երկրներում: Այսպես, ՌԴ նախկին արագործնախարար Ա.Կոզիրևը ներկայումս զբաղեցնում է ամերիկյան ICN Pharmaceuticals, Inc. դեղագործական ընկերության արևելանավորակական սպորտաբաժանման փոխնախագահի և ղեկավարի պաշտոնները: Ակնհայտ է, որ ուղիների ներթափանցելիությունը, ինչպես նաև քաղաքական ընտրանու շրջապատյուն ամբողջովին ավելանալու միտում ունեն ճգնաժամների պայմաններում: Քաղաքական զարգացման փորձը վկայում է, որ կայուն զարգացման պայմաններում ընտրանու հավաքագրումը և շրջապատյուն առավել իրապետական է և համեմատաբար զերծ մարզինալ դրսևորումներից:

\* \* \*

Նանրագումարենք: Անցումային հասարակությունների կառավարող ընտրանու հավաքագրման գործընթացն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ սկզբունքները:

*Ընտրանու կողմից սոցիալական կողմնորոշիչների ներդաշնակման սկզբունք:* Քաղաքակրթության արշալույսից մինչ այսօր մարդկությանը հուզող հարցը, թե ում է պարկանում առաջադար դերը սոցիալական զարգացման գործընթացում՝ առանձին մարդկանց (առաջնորդ), առանձին խմբերի՞ն (ընտրանի), թե՛ զանգվածներին, արդիական է նաև ժողովրդավարական անցման գործընթացում գրավող հետխորհրդային փարածքի նորանկախ պետություններին: Սոցիալական կողմնորոշիչների ներդաշնակման սկզբունքը պահանջում է, հաշվառելով հասարակության մեջ առկա մարդաբանական, մասնագիտական, սոցիալական փարբերությունները, համախմբման համար նպաստավոր պայմաններ ստեղծել (համախմբված ժողովրդավարություն):

*Ընտրանու հավաքագրման քաղաքակրթական առանձնահատկությունների հաշվառման սկզբունք:*

Վերջինիս էությունը պայմանավորված է հասարակության սոցիալական հիշողությամբ, քաղաքական գիտակցությամբ, մշակույթով, կառավարող և ընդդիմադիր էլիտար խմբերի հարաբերությունը կարգավորող արժեքային կառուցակարգով: Քաղաքակրթվածության որոշակի մակարդակը հնարավորություն է տալիս կառավարչական հակումներ ունեցող անձանց կամ սոցիալական խմբերին արդիականացման փարբեր փուլերի պահանջներին համապարասխան՝ էվոլյուցիայի ենթարկել իրենց քաղաքական վարբը: Այս ամենն առաջին հերթին ենթադրում է քաղաքական կառավարման հետևյալ մեթոդների իմացություն. «մաքիավելիստական մոդել»՝ կազմակերպված փոքրամասնության խմբիչխան կառավարում (Գ.Մոսկա), «շուկայական մոդել»՝ ինստիտուցիոնալացված ազարական-ժողովրդավարական կառավարում (Ջ.Կենսլինգ «քաղաքական դաշրը դառնում է իշխանության և արժեքների շուկա», «խաղային մոդել»՝ քաղաքական աշխարհը թարրոն է և խաղաղաշր (Է.Բերն):

*Դավանած գաղափարների և արժեքների գիտական ուսցիոնալության սկզբունք:* Առաջին հերթին այն ենթադրում է փարբեր ընտրախա-



վերի կողմից մշակված գաղափարների իրավահավասար ներդրման հնարավորություն հասկանալու կառավարման համակարգ: Այսպիսով էլ քաղաքական այլակարծություն և հանդուրժողականություն: Բնական է, որ այդ տարաբնույթ գաղափարներ կրողների միջև երկխոսություն տեղի ունենալիս այն պետք է ավարտվի ոչ թե մեկի «հաղթանակով», մյուսի «պարտությանը», այլ պետք է կարևորվի պետականության գաղափարը՝ համակեցության նորմերի, սոցիալական արդարության, համընդհանուր շահերի իրարևս հաշվառմամբ:

### **Գրականության ցանկ**

1. Մելքոնյան Մ. 1993. *Զինվորականության դերը Թուրքիայի քաղաքական կյանքում*: Զինվոր, 10.05-20.05
2. Մարգարյան Մ. 2004. *Կառավարող ընդհանրին պետական կառավարման համակարգում*: Հանրային կառավարում (գիտական ամսագիր), №1-2
3. Блондель Ж. *Политическое лидерство*. Райгородский Д.Я. Психология и психоанализ власти. Т.1. Хрестоматия. – Самара, Изд. дом «БАХРАХ», 1999.
4. Будон Р. *Место беспорядка*. М.
5. Бурдые П. *Социология политики*. М.: Socio Logos, 1993.
6. Гаман-Голутвина О. *Определение основных понятий элитологии*. – Полис, №3, 2000.
7. Мельвиль А.Ю. *Категории политической науки. Учебник*. М.: Московский государственный институт международных отношений (Университет); «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2002.
8. Пинто Д. *Элиты в демократических обществах*. – Вестник Московской школы политических исследований. №1, 1995.
9. Ривера Ш. *Тенденции формирования посткоммунистической элиты России: репутационных анализ*. – Полис, №6, 1995.
10. Сартори Дж. *Вертикальная демократия*. – Полис, №2, 1993.
11. Шпенглер О. *Закат Европы*. Новосибирск: Наука.
12. Dye T. 1990. *Who's Running America? The Bush Era*. Englrwood Cliffs: Prentice Hall.
13. Field L., Highly J. 1980. *Elitism*. L.
14. Marger M. 1981. *Elites and Masses: an Introduction to Political Sociology*. N.Y., p.207.
15. Putnam R. 1976. *The Comparative Study of Political Elites*. N.Y.

**Mariam Margaryan**  
**PhD of Philosophy**

**WAYS OF MOBILISATION OF POLITICAL ELITE IN  
TRANSITIONAL SOCIETIES  
(METHODOLIGAL ANALYSIS)**

The ways of mobilisation of political elite in transitional societies are revealed. Through the complex analysis, the open and closed mobilisation value system of political elite are revealed. Political instability creates marginal groups in transitional societies the activity of which doesn't provide admission of effective decisions.

**ԱՐԱ ԲՐՈՒՏՅԱՆ**

**ՆՏ ՊԿ ակադեմիայի  
քաղաքագիտության ամբիոնի դասախոս,  
քաղաքագիտության թեկնածու**

**ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ` ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԹՎՓՈՒՆՅԵԼՈՒ  
ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*...իրադարձությունները մուտք են գործում գաղափարախոսության ոլորտ այն պահից սկսած, երբ նրանք տեսանելի են դառնում նորությունների պատրաստման գործընթացի համար:*

Stuart Hall in Watson, 1998: 124

Ժամանակակից հասարակություններում մարդիկ քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտի նորությունների հիմնական մասնաբաժինը ստանում են զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) միջոցով: Ուստի հաճախ հենց այս տեղեկատվությամբ են անհատները, լինեն նրանք պետական այրեր, գործարարներ, թե՛ տնային տնտեսուհիներ, կառուցում իրենց դատողություններն ու որոշումներ ընդունում, և այս հանգամանքը կարևորում է այն գործոնների բացահայտումը, որոնք ազդում են ԶԼՄ-ների ու դրանց միջոցով նաև հասարակության կողմից իրականության ընկալման վրա:

Նողվածի նպատակն է բացահայտել գաղափարախոսության` քաղաքական նորությունների պատրաստման գործընթաց ներթափանցելու կառուցակարգերը: Ընդ որում, հողվածն անդրադառնալու է ոչ թե այն իրավիճակներին, երբ որոշակի գաղափարախոսություն արտահայտող մրբերը միտումնավոր կերպով են մրցվում քաղաքական նորությունների մեջ դրանց պատրաստման տարբեր փուլերում, այլ այն նախադրյալներին կամ նախապայմաններին, որոնց առկայությունը հնարավոր է դարձնում գաղափարախոսության անբռնագրոս, բողարկված ներթափանցումը քաղաքական նորությունների բովանդակության մեջ:

Այս նպատակին հասնելու համար ներկայացվում է «գաղափարախոսություն» (իդեոլոգիա) հասկացության սահմանումը՝ որպես իրականության հայեցակարգային դասակարգում և փեսակավորում [Smith in Tuchman, 1978: 179]: Այնուհետև հոդվածը փաստարկելու է, որ ԶԼՄ-ների կազմակերպչական ռազմավարությունն ու մարտավարությունն անխուսափելիորեն պայմաններ են սրելով նորությունների բովանդակության մեջ գաղափարախոսության ներթափանցման համար: Այս ներթափանցումն էլ իր հերթին դառնում է ԶԼՄ-ների կողմից իրականության «կառուցման» [McNair, 1999: 12] առաջնային գործոնը:

Այս պնդումը հիմնավորելու համար հոդվածը ներկայացնելու է գաղափարախոսական թեքումը բացահայտող հայեցակարգային ապարարը, որն այնուհետև կիրառվելու է ԶԼՄ-ների քաղաքական գործունեության մեկ ոլորտի՝ նորությունների պարբերական գործընթացի նկատմամբ: Նոդվածում քննարկվում են քաղաքական նորությունների պարբերական երկու փուլերը՝ Տունստալի «գործառության փարբերակմանը» համապատասխան՝ նորությունների հավաքում և մշակում [Tunstall, 1970: 25, փեն նաև Schlesinger, 1978: 57-58]: Այսպիսով, հոդվածի փեսական և հայեցակարգային մասերին կհետևի նորությունների հավաքման և մշակման փուլերի վերլուծությունը:

Վերջում հանգում ենք այն եզրակացության, որ ինչպես նորությունների պարբերական գործընթացը, այնպես էլ գաղափարախոսական շեղումը պարախանաբար են ԶԼՄ-ների կողմից իրականության աղճատման և կառուցման համար, քանի որ գաղափարախոսությունը և նորությունների պարբերական գործընթացը գործում են սիմբիոտիկ փոխգործակցության ձևաչափով: գաղափարախոսական շեղման ներթափանցումը նորությունների բովանդակություն անխուսափելի է որպես նորությունների պարբերական գործընթացի արդյունք, ինչն էլ իր հերթին կանխորոշում է ԶԼՄ-ների կողմից իրականության աղճատումը:

## Տեսական մոտեցումներ և սահմանումներ

ԶԼՄ-ների կողմից իրականության աղճատման գործոնները բացահայտելու համար անհրաժեշտ է համակարգել ԶԼՄ-ների գործունեությունը: Կարիք կա նաև հստակացնել գաղափարախոսության հայեցակարգը՝ գաղափարական շեղումները բացահայտող կառուցակարգ մշակելու նպատակով:

ԶԼՄ-ների գործունեությունը համակարգելու համար հեղինակն առաջարկում է հետևել Տունսթրալի կողմից [1970: 25] նորությունների պարբերական գործընթացի երկու փուլի՝ նորությունների հավաքման և մշակման ենթագործընթացների բաժանելու առաջարկին: Առաջին՝ նորությունների հավաքման փուլում գաղափարական կառուցակարգերի աշխատանքը լուսարանելու համար առաջարկվում է հետևել Սփրյուարթ Նոլի «առաջնային սահմանողների» տեսական մոտեցմանը, որը պնդում է, թե լրագրողներին պարտադրվող վերջնաժամկետները, մի կողմից, և անկողմնակալության մասնագիտական պահանջները, մյուս կողմից, առաջացնում են.

*ԶԼՄ-ների՝ համակարգված լայն մատչելիություն իշխանական և արդյունյալ ինստիտուցիոնալ դիրք ունեցողների համար... Մա «վարահելիության հիերարխիան է»՝ հավանականությունն այն բանի, որ իշխանական կամ բարձր դիրք գրավողների սահմանումները ... կրկնունվեն, բանի որ ընդունված է համարել, որ այս տիպի աղբյուրների տրամադրության տակ են գրնվում առավել հստակ և մասնագիտացված տվյալներ տարբեր խնդիրների վերաբերյալ, բան ունի բնակչության մեծամասնությունը: Այս կառուցվածքային նախապայմանության արդյունքում նման աղբյուրները դառնում են խնդիրների և իրատարածությունների «առաջնային սահմանողները»:*

Hall et al, 1978, in Manning, 2001: 14.

Լրագրության սոցիոլոգիայի տեսություններում ի՞նչ դիրք է զբաղեցնում «առաջնային սահմանողների» տեսական դրույթը: Այս հարցին պատասխանելու համար առաջարկվում է հետևել լրագրության սոցիոլոգիայի տես-

սությունների համար ՄակՆեյրի առաջարկած բաժանմանը՝ մրցակցային և դոմինանտության պարադիգմեր, որոնք նույնացվում են ՋԼՄ-ների հանդեպ համապարասխանաբար նորմարիվ և քննադատական վերլուծական մոտեցումների հետ [McNair, 1998: 19]: Այս բաժանման դեպքում «առաջնային սահմանողների» տեսական մոտեցումը պարկանում է դոմինանտության պարադիգմի փրոյեկին: Մյուս՝ մրցակցային պարադիգմի հիման վրա առաջարկվող տեսությունները համարժեք չեն արտացոլում կամ բացաբրում ՋԼՄ-ների գործունեությունը, քանի որ դրանք ունեն պրեսկրիպտիվ և նորմարիվ բնույթ, մինչդեռ, ինչպես ՄակՆեյրն է նշում, կապիտալիստական երկրների ՋԼՄ-ները միշտ չէ, որ մրցակցային պարադիգմին համապարասխան են գործում [1998: 21-22]:

Ո՛րն է «առաջնային սահմանողների» տեսական դրույթի օգտակարությունն այս հողվածի համատեքստում: Բանն այն է, որ իրական կյանքում լրագրողները, Նյումանի խոսքերով, գործում են մասնագիտական միջավայրում, որը հիմնականում կազմված է նորությունների աղբյուրներից, հասարակայնության հետ հարաբերությունների մասնագետներից և այլ լրագրողներից [մնջբերումն ըստ Dearing and Rogers, 1996: 33]: Այսպիսով, լրագրողները հակված են «առաջնային սահմանողների» հետ աշխատելու, քանի որ վերջիններիս տրամադրության տակ առկա է «առավել ճշգրիտ կամ մասնագիտացված տեղեկատվությունը», ի տարբերություն բնակչության մեծամասնության [Hall, մնջբերումն ըստ՝ Manning, 2001: 14]: Այս նույն հիմնավորումը թույլ է տալիս տրամաբանորեն եզրակացնել, որ լրագրողները հակված են տեղեկատվություն ստանալ ցանկացած այլ հասարակական կառույցից, որն ի վիճակի կլինի տրամադրել «ճշգրիտ և մասնագիտացված տեղեկատվություն»:

Այսպիսով, կարելի է ասել, որ «առաջնային սահմանողների» մոտեցումը ինդուկտիվ կերպով բացահայտում է նաև այն ընդհանուր կառուցակարգը, որի միջոցով նորությունների հիմքում դրվող տեղեկությունը միջնորդավորվում է արդեն մասնագիտական միջավայրում և դրանից հետո միայն ներ-

կայացվում լրագրողներին: Այս մասնագիտական միջավայրը կարող է ներառել նաև ոչ-առաջնային սահմանողների, ինչպիսին են, օրինակ, ընդդիմության խոսնակները, ոչ-կառավարական կազմակերպությունները, և այլն: Սակայն գաղափարախոսական շեղման կառուցակարգերի ուսումնասիրության պարագայում այս հանգամանքն էական չէ, քանի որ մեզ հերաքրքրում է իրականության աղճատման կառուցակարգերի աշխատանքը՝ առանց փեղեկավարության աղբյուրների քաղաքական դիրքորոշմանը հատուկ անդրադառնալու:

Քաղաքական նորությունների պատրաստման երկրորդ՝ նորությունների մշակման փուլում ԶԼՄ-ների գործունեությունը բացառելու համար առաջարկվում է անդրադառնալ նորվեգացի գիտնականներ Գալտունգի և Ռուփի «նորությունների արժեքի»՝ հաղորդակցային գիտություններում նոր ուղղություն բացած փրեսական դրույթին: Ըստ այդմ՝ նորությունների պատրաստման գործընթացում իրադարձությունները նորություններ են դառնում այնքանով, որքանով այդ իրադարձությունները նվազման կարգով համապատասխանում են հետևյալ պայմաններին՝ իրադարձության հաճախականությունը, շրջադարձային իրադարձության նախաշենը, իրադարձության բացարձակ լարվածությունը, իրադարձության լարվածության աճը, իրադարձության աներկիմաստությունը, իրադարձության իմաստալիությունը, իրադարձության մշակութամերձությունը, իրադարձության փեղիկ լինելը, իրադարձության ներդաշնակությունը, իրադարձության կանխատեսելիությունը, իրադարձության հանդեպ պահանջարկը, իրադարձության անսպասելիությունը, իրադարձության անկանխատեսելիությունը, իրադարձության հազվադեպությունը, իրադարձության շարունակական բնույթը, իրադարձության ավարտուն լինելը, իրադարձությունում էլիփար ազգերի առկայությունը, իրադարձությունում էլիփար անձանց առկայությունը, իրադարձությունում անհատների առկայությունը, իրադարձությունում բացասական գործոնի առկայությունը: Որքանով իրադարձություններն ավելի շատ են բավա-

րարում վերոնշյալ չափանիշներին, այնքանով մեծ է հավանականությունը, որ դրանք նորությունների համար կրնաքվեն [1973: 69-70]:

Տեսական մասի վերջում մնում է րալ գաղափարախոսության սահմանումը, որպեսզի դրա հիման վրա հնարավոր լինի հայտնաբերել գաղափարախոսական թեքումը: Քանի որ, ինչպես նշվել է, հողվածի նպատակն ըջ թն ինչ-որ մասնավոր, օրինակ՝ աջ կամ ձախ գաղափարախոսության բացահայտումն է, այլ «գաղափարախոսություն» հասկացության էական հատկանիշի բացահայտումը: Նողվածում օգտագործվում է գաղափարախոսության Սմիթի սահմանումը, որը դիտարկում է այն որպես «մարդկանց՝ իրական աշխարհի հասկացությունների կոնցեպտուալ դասակարգման և տեսակավորման գործողություն» [մնջբերումն ըստ՝ Tuchman, 1978: 179]: Քաղաքական նորությունների պատրաստման փուլերում գաղափարախոսական շեղումը բացահայտելու համար հողվածում օգտագործվելու է «գաղափարախոսություն» հասկացության՝ իրականության կոնցեպտուալ դասակարգման և տեսակավորման էական հատկանիշը:

Այս հայեցակարգային ապարատն օգտագործելով՝ այժմ փորձենք վերլուծել գաղափարախոսական շեղման դերը նորությունների հավաքման և մշակման փուլերում:

## **Նորությունների հավաքում**

Քաղաքական նորությունների պատրաստման առաջին՝ նորությունների հավաքման փուլն որոշիչ դեր ունի դրանց հերագա մշակման և ՋԼՄ-ների գործունեության վերջնական արդյունքի համար: Իրոք, ներդրումը մեծապես կանխորոշում է վերջնական արդյունքը, ուստի կարևոր է հասկանալ՝ որտեղ և ինչպես են ՋԼՄ-ները տեղեկատվության հավաքում և ինչպես է այդ տեղեկատվությունն աղճատվում այս փուլում:

ՋԼՄ-ները, ինչպես արդեն նշվել է, հիմնականում հավաքում են արդեն իսկ մշակված տեղեկատվություն: ՋԼՄ-ները հազվադեպ են գործ ունենում



փաստացի իրականության հետ, քանի որ անհնար է ներկայացնել «նորությունների պատրաստման սենյակից դուրս գոյություն ունեցող բարդ սոցիալական աշխարհը...մեկ անաչառ, վերջնական լրագրողական անդրադարձով» [Tuchman, մեջբերումն ըստ՝ Manning, 2001: 21]: Ահա հիմնական պատճառը, թե ինչու է ՋԼՄ-ների իրականությունը տրամադրվում, և, գոնե մասնակիորեն կանխորոշվում ՋԼՄ-ների տեղեկատվության աղբյուրների կողմից:

Այսպիսով, նորությունների աղբյուրներն առաջնային նշանակություն են ձեռքբերում ՋԼՄ-ների գործունեության համար: Այստեղ հետևյալ հարցադրումն է առաջանում՝ ինչ փոխի աղբյուրներից են ՋԼՄ-ները սովորաբար ստանում իրենց տեղեկատվությունը: Նույի «առաջնային սահմանողների» տեսական դրույթին համահունչ՝ հարցի պատասխանը հետևյալն է. ՋԼՄ-ները սովորաբար գերադասում են տեղեկատվություն ստանալ քաղաքական և տնտեսական վերնախավերից, որոնք էլ, այսպիսով, կանխորոշում են ՋԼՄ-ների իրականությունը նորությունների հավաքման փուլում:

Այս հանգամանքը չի նշանակում, որ ՋԼՄ-ներն անհրաժեշտաբար լոյալ են վերնախավերի հանդեպ<sup>1</sup>: Ավելի ճիշտ, ըստ ՄակՆեյրի, առաջնային սահմանողների հանդեպ լրագրողական հակվածության պատճառը ՋԼՄ-ների կողմից վստահելի և հեղինակավոր տեղեկատվության աղբյուրների պահանջն է, վերջնաժամկետների ճշտումը, իսկ վերնախավի ներկայացուցիչները, սովորաբար, ավելի պատրաստակամ են բավարարել այս պահանջները, ինչը նրանց առավելություն է տալիս այլ խմբերի նկատմամբ [1999: 156]:

<sup>1</sup> Չնայած մյուս կողմից կարելի է փաստարկել, որ լրագրողներն ավելի շատ հակված են որպես տեղեկատվության աղբյուրներ հենց *իշխող* կուսակցության աղբյուրներին դիմելու: Մասնավորապես, Տունսփալը պնդում է, որ Միացյալ Թագավորության Նամայնքների պալատում հավաքարձագրված լրագրողները՝ այսպես կոչված Ուեստմինստերյան լոբբին, սովորաբար պակաս հետաքրքրված են «ընդդիմության և սովերային կաբինետի գործունեությունը լուսարանելու մեջ, քան կառավարող կուսակցության և գործող կաբինետի: Լոբբիի մամուլ ասուլիսների ծանրության կենտրոնը գործող կառավարության գործունեության լուսարանման մեջ է և հոգուր դրա» (1970: 55):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «առաջնային սահմանողների» հանդեպ լրագրողական հակվածության պարզապես նմանապիպ աղբյուրների վարակելիությունն է, մի կողմից, և լրագրողական առօրյայի, մասնավորապես՝ վերջնաժամկետների ճշգրտումը՝ մյուս կողմից: Իրոք, ինչպես Ֆիշմանն է նշում, բյուրոկրատական ապարատը լրագրողներին փրամադրում է «իրադարձությունների շարունակական պարկեր» [մեջբերումը՝ ըստ Schudson, 2000: 184]:

Ի՞նչ կարելի է հավելել աղբյուրներ – լրագրողներ փոխգործակցության մասով: Ինչպես Լեոն Միգալն է նշում, փեղեկավարվության հավաքումը լրագրողական առօրյայի կարևորագույն բաղադրիչն է [1973: 4], իսկ այդ առօրյան իր հերթին նկատի է առնում աղբյուրների ու լրագրողների միջև շարունակական համագործակցություն և հասարակության կապեր: Նոլլի «առաջնային սահմանողների» դրույթի համաձայն կարելի է եզրակացնել, որ այս առօրեական աղբյուրները հիմնականում պետական, գործարար և այլ կարգի բարձր դիրք գրավող վերնախավերն են, ինչի պարզապես է այն հանգամանքը, որ հիմնականում հենց այս վերնախավերն են, որոնք հնարավորություն ունեն հասարակական հեղափոխություն ներկայացնող բազմաթիվ փեղեկավարություն փրամադրել: Ինչպես, օրինակ, Ուեբստերն է նշում, խոսելով գործադիր իշխանության մասին՝ «այն ... միակ ինստիտուտն է, որ ունակ է կանոնավոր և առօրեական կերպով հավաքել և մշակել ցանկացած փիլիսոփայական փեղեկավարություն, ինչի դա ամուսնալուծության վիճակագրությունը, թե՛ մանկական մահացությունը» [2002: 186]:

Մյուս պարզապես, որը պարասխանատու է նորությունների հավաքման գործընթացի՝ վերնախավային աղբյուրների հանդեպ հակվածության համար, այն է, որ սովորաբար լրագրողները փորձագիտական մակարդակով մասնագիտացված չեն այն որոշակի ոլորտներում, որոնց մասին նրանք սովորաբար գրում են: Ինչպես Էրիկսոնը և մյուսներն են նշում, լրագրողները հաճախ չունեն խոր գիտելիքներ փյալ խնդիրների ուսումնասիրության համար, կամ էլ ժամանակ չունեն իրադարձությունների լրիվ ընթացքն ըմբռնել:

լու համար, և այս պատճառով նույնիսկ պաշտոնական անձի կողմից նախօրոք սրբագրված տեղեկատվությունն ավելի հարմար է լրագրողի օգտագործման համար, քան այն տեղեկատվությունը, որը լրագրողը ինքնուրույն կարող էր հավաքել [1989: 384-385]:

Նորությունները սահմանելու գործում աղբյուրների որոշիչ կարևորությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ լրագրողները՝ իրենց աշխատանքի առօրեական բնույթի պատճառով ձգտում են կենտրոնանալ աղբյուրների սահմանափակ քանակության վրա: Ինչպես նույն Էրիկսոնն է նշում, չնայած, սովորաբար, լրագրողների համար պտտենցիալ գիտելիքի լայն դաշտ գոյություն ունի, մասնավորապես՝ պաշտոնական և գիտական փաստաթղթեր, վիճակագրություն, տարբեր տեսակի դիտարկումներ, լրագրողները «հավկամ են սահմանափակել իրենց աղբյուրների դաշտը մամլո հաղորդագրություններով և աղբյուրների հետ հարցազրույցներից մեջբերումներով» [1989: 1]:

Լրագրողների՝ բյուրոկրատական աղբյուրների հանդեպ հավկամությունը կանխորոշում է «առաջնային աղբյուրների» տեղեկատվության տեսակարար բարձր կշիռը պատրաստի նորություններում: Միացյալ Նահանգների երկու հեղինակավոր՝ «Վաշինգտոն փոսթ» և «Նյու Յորք թայմս» թերթերի նորությունների աղբյուրների վերաբերյալ իր հետազոտության մեջ Միգալը նշում է, որ պաշտոնական փաստաթղթերը, մամլո հաղորդագրությունները, ասուլիսները և փակ ճեպագրույցները, տեղեկատվության արտահոսքերը, ոչ կառավարական կազմակերպությունների փաստաթղթերը կազմում են այս թերթերի տեղեկատվության աղբյուրների 70%-ից ավելին [1973: 119-121]:

Վերոշարադրյալից կարելի է անել հետևյալ եզրակացությունը. ապագա նորությունների համար տեղեկատվության ընտրության և դասակարգման գործում նորությունների աղբյուրներից ՋԼՄ-ների կախվածությունն աղբյուրներին դարձնում է «մերտ-լրագրողներ» այն իմաստով, որ այդ աղբյուրները կանխորոշում են այն տեղեկատվությունը, որը լրագրողները և խմբա-

գիրներն ավելի ուշ սրանալու են: Մաննինգը նկատում է [մեջբերումը՝ ըստ Էրիկսոն և մյուսներ, 1989: 6], որ աղբյուրների խոսնակներն իրենց փրամադրած փնդեկավարության մեջ փաստորեն դնում են բոլոր էական շեշտադրումները, և այս դրույթի հիման վրա Էրիկսոնը նորությունների պարասպրաման ծանրության կենտրոնը փնդաշարժում է լրագրող-խմբագիր հարաբերություններից աղբյուր-լրագրող հարաբերություններ, և նկատում է, որ լրագրողն այս նոր ձևաչափում գործում է որպես խմբագիր՝ «կանխորոշելով, թե նյութի որ ասպեկտներն են օգտագործվելու ... այլ աղբյուրներից սրացված փնդեկավարության հետ մեկտեղ» [Ericson et al մյուսներ, 1989: 6]:

Այս կետում, երբ աղբյուրը լրագրողին ներկայացնում է արդեն իսկ մշակված իրականություն, մենք կարող ենք կիրառել գաղափարախոսական շեղման բացահայտման կոնցեպտուալ գործիքը՝ իրականության կոնցեպտուալ փնդակավորման և դասակարգման հասկացությունը: Երբ աղբյուրը ներկայացնում է լրագրողին արդեն իսկ շեշտադրված փնդեկավարություն [Manning, 1986, մեջբերումն ըստ՝ Erickson *et al*, 1989: 6], կամ երբ աղբյուրները դառնում են «լրագրողներ», իսկ լրագրողները՝ «խմբագիրներ», կարելի է փնտնել, որ աղբյուրները կոնցեպտուալ կերպով փնդակավորում և դասակարգում են փնդեկավարությունը, այսինքն՝ իրականության աղճատումն այս դեպքում կարելի է որակել որպես գաղափարախոսական շեղում: Բացի այդ, կարելի է եզրակացնել, որ «առաջնային սահմանողները» այդպիսին են դառնում՝ հենց նորությունների հավաքման գործընթացի առանձնահատկություններից ելնելով [Erickson *et al*, 1989: 1; Fishman, 1980: 52; մեջբերումը՝ ըստ Schudson, 2000: 184; McNair, 1999: 156], ուստի կարելի է պնդել, որ գաղափարախոսական շեղումն անխուսափելիորեն առաջանում է նորությունների պարասպրաման հավաքման փուլում՝ որպես ՋԼՄ-ների և նրանց աղբյուրների փոխգործակցության արդյունք: Այսպիսով, երկրորդ՝ նորությունների մշակման փուլ մտնող փնդեկավարությունն արդեն իսկ գաղափարախոսական շեղում է պարունակում:

## Նորությունների մշակում

Նորությունների պատրաստման երկրորդ փուլը մշակումն է, երբ գործառնություններ են կատարվում աղբյուրներից սրացված տեղեկատվության հետ: Այս փուլում իրականության աղճատման համար պատասխանատու գործոնները բացահայտելու համար նախ կդիտարկվեն այն չափանիշները, որոնց հիման վրա ՋԼՄ-ներում առկա տեղեկատվությունից ընտրվում են վերջնական նորությունների նյութերը: Սրանից հետո դիտարկվելու են ՋԼՄ-ների ներսում կազմակերպչական առօրեական աշխատանքը և դրա ազդեցությունը նորությունների մշակման գործընթացի վրա:

### (ա) Նորությունների արժեքային համակարգ

Նոդվաժի ներածությունում արդեն ներկայացվել է Գալտունգի և Ռուփի [1973: 62-72] «նորությունների արժեք» մոտեցումը: Այս մոտեցումը բացատրում է, թե ինչ չափանիշների հիման վրա է աղբյուրներից սրացված տեղեկատվությունը խմբագրվում և ընտրվում որպես հավանական նորություններ:

Գալտունգը և Ռուփը փաստարկում են, թե որքան մեծ է բավարարված չափանիշների քանակը, այնքան մեծ է հավանականությունը, որ տվյալ տեղեկատվությունը կդառնա նորություն [մեջբերումն ըստ՝ Watson, 1998: 118]: Դիտարկելով այս չափանիշները<sup>1</sup> կարելի է տեսնել, որ դրանց մի մասը բացահայտորեն գաղափարախոսական է (անհատների, ազգերի էլիտարությունը, անձնականացված լինելը, մշակութամերձությունը), իսկ մյուս չափանիշները վերաբերում են ՋԼՄ-ների գործունեության առօրեականությանը (իրադարձության հաճախականություն, կանխատեսելիություն, և այլն): Այս բոլորի համար ընդհանուր է այն, որ այս չափանիշների գործառնության հիմքը տեղեկատվության կոնցեպտուալ տեսակավորումն ու դասակարգումն է: Իրոք, հենց տեղեկատվությունն ընտրվում է նորություն դառնալու համար,

<sup>1</sup> Տե՛ս Տեսական մոտեցումներ և սահմանումներ:

այդ տեղեկատվության այն մասը, որը տեղեկատվությունը դարձրել է նորություններին արժանի, ընդգծվում է և շեշտադրվում [Galtung and Ruge, 1973:69-70]: Այսպիսով, նորությունների արժեքի վրա հիմնված տեղեկատվության ընտրության և շեշտադրման գործողություններում հեշտությամբ կարելի է բացահայտել գաղափարախոսական շեղման առաջացումը:

Նորությունների արժեքները, ուստի այն կառուցակարգեր են, որոնց օգնությամբ գաղափարախոսական շեղումը ներթափանցում է նորությունների բովանդակության մեջ: Նորությունների արժեքները գործում են մշտական սկզբունքով, ինչպես Ռոչոն է արտահայտվում [1975: 64]՝ առօրեականացվի առօրեականացմանը ոչ ենթակա գործունեությունը՝ ՋԼՄ-ների աշխատանքը: Իրոք, նորությունների արժեքների չափանիշները «ենթագիտակցորեն սովորվում են և ներքնապես ընկալվում ու կիրառվում գործնականում խմբագրման ժամանակ» [Nordenstreng, 1972: 396]: Արդեն հիշատակված Սպյուարտ Նոլլը, ով նույնպես անդրադարձել է նորությունների արժեքներին, փաստարկում է, թե «գաղափարախոսությունը հիմնականում քողարկված բնույթ է կրում և կազմում է «խորքային կառույցը», որի ընտրություն կատարող կառուցակարգի գործառույթը թաքնված է անգամ նրանցից, ովքեր մասնագիտորեն գիտեն, թե ինչպես պետք է վարվել գաղափարախոսության հետ» [մեջբերված է ըստ Watson, 1998: 124]:

Այսպիսով, մենք բացահայտեցինք, թե ինչպես այն մարտավարությունը, որը ՋԼՄ-ները որդեգրում են նորությունների տեղեկատվությունն ընտրելու և մշակելու համար՝ նորությունների արժեքները, ինքնաբերաբար, իրենց բնույթից ելնելով և հանդես գալով, Նարթիի խոսքերով, որպես «գաղափարախոսական կողեքս» [1982: 80], սրեղծում են գաղափարախոսական շեղում նորությունների պարբերական գործընթացի մշակման փուլում: Նկատարար կարելի է եզրակացնել, որ այստեղ գաղափարախոսական շեղումը ծագում է նորությունների մշակման գործընթացի կազմակերպման արդյունքում:

## (բ) Առօրեական աշխատանք և փնխնուլոգիաներ

Նորությունների պատրաստումը ծայրահեղ առօրեականացված գործընթաց է: Առօրեականացումը միակ ուղին է, որ թույլ է տալիս հավաքել, ընկալել, խմբագրել և պատրաստել փնխնուլոգիաները պարբերական հասարակական սպառման համար: Նեգրինը նշում է. «Պարբերական նորությունների եթերի պահանջներն այնքան խիստ են, որ պահանջ է առաջացել առօրեական աշխատանքի, որը թույլ է տալիս մշակել փնխնուլոգիան մշտական հոսքը» [1989: 120]:

Այս առօրեականացումը որոշակի հետևանքներ է թողում նորությունների մշակման գործընթացի վրա: Առաջին՝ քանի որ թերթերը, հեռարձակվող ՋԼՄ-ները և այլ տեսակի լրագրողական կազմակերպությունները հիմնականում կրկնվող, պարբերական ռիթմով են աշխատում, դա ազդում է իրադարձությունների ներկայացման ձևի վրա: Ռոբը նշում է, մասնավորապես՝ քանի որ թերթի ամեն թողարկում պետք է էականորեն (եթե չասենք՝ բացարձակորեն, Ա. Բ.) տարբերվի նախորդ և հաջորդ թողարկումներից, և միևնույն ժամանակ ավելի թողարկումը պետք է թեմատիկ շարունակականության մեջ լինի իր նախորդների և հաջորդների հետ, ապա «թերթերի թողարկման ժամանակացույցը պարտադրող հանգամանք է դառնում հրատարակվող թեմաների համար» [1973: 76]:

Մըրդոքը, անդրադառնալով ամենօրյա թերթերին, նկատում է, որ քսանչորսամյա պարբերականությունը տպագրության համար կանխորոշում է նույն ժամանակային պարբերականության նորություններ, և այս հանգամանքն առավելություն է տալիս այս պարբերականության իրադարձություններին նորություն դառնալու համար [1973: 163]: Պարբերականության հաճախականությունը Քալվորնզի և Ռուժի նորությունների արժեքներից մեկն է, և, այսպիսով, ինչպես արդեն ցույց է տրվել, քանի որ նորությունների արժեքները գաղափարախոսականացված են, ըստ սահմանման [Hartley 1982: 80], այսպես մենք դիտում ենք, թե ինչպես է նորությունների պատրաստման առօրեականությունը գաղափարախոսական շեղում առաջացնում:

Նորությունների պատրաստման գործընթացի առօրեականացումը մեկ այլ կարևոր հետևանք է ունեցել. լրագրողներն ակնկալում են, որ նոր իրա-

դարձություններ են րեղի ունենալու: Օրինակ՝ BBC-ում աշխարանքային օրը սկսվում է այն հավանական իրադարձությունների քննարկմամբ, որոնք կարող են նորություն դառնալ [Schlesinger, 1978: 66]: Այս առումով հրատարակ է մնում մեկ դար առաջ լորդ Քրրգոնի արտահայտած միտքը, թե ինքը վստահ չէ, թե ինչն է լրագրության հստակ գործառույթը, սակայն այդ գործառույթը չի բացառում «փաստերի խելացի ակնկալումը նույնիսկ այդ փաստերի իրականանալուց առաջ» [մեջբերված է ըստ՝ Ingham, 1991: 194]:

Լրագրողի և իրադարձության միջև այս ժամանակային շեղումը հարցականի րակ չի դնում նորությունների արժեքի դերը՝ որպես իրադարձության՝ նորություն դառնալու չափանիշ. լրագրողներին այս պարագայում նորությունների արժեքը պետք է որպես չափանիշ, թե ի՞նչ խելացիորեն ակնկալել, Քրրգոնի խոսքերով: Այսպիսով, իրադարձության նախօրոք ակնկալումը գաղափարախոսական է իր էությանմբ. սա մեկ այլ դեպք է, երբ նորությունների պարաստման գործընթացի առօրեականացվածությունը պարճառ է դառնում գաղափարախոսական շեղման առաջացման համար:

Նորությունների պարաստման րեխնոլոգիական համարեքսպը նույնպես ՁԼՄ-ների կողմից իրականության աղճարում է կանխորոշում: Իրոք, նորությունների բովանդակությունը ուղղակիորեն պայմանավորված է նորությունների պարաստման րեխնիկական պայմաններով [McNair, 1998: 125]: Այս պարագայում կարող է րպավորություն սրեղծվել, թե նորությունների պարաստման րեխնոլոգիական պայմանները չեն կարող որևէ դեր խաղալ, կամ պարճառ դառնալ գաղափարախոսական շեղման համար: Սակայն չպետք է մոռնալ, որ հաղորդակցային րեխնոլոգիաները գործ ունեն իրականության միավորների հետ, որոնք արդեն իսկ ընրված են լուսաբանման համար և գաղափարախոսական շեղումն արդեն իսկ րեղի է ունեցել այդ ընրության փուլում: Այսպիսով, եթե նույնիսկ րեխնոլոգիական պայմաններն ուղղակիորեն չեն կարող ազդել գաղափարախոսական շեղման առաջացման վրա կամ ազդվել այդ շեղումից, իրականում րեխնոլոգիաները՝ որպես նորությունների պարաստման գործընթացի բաղադրիչներ, հաղորդում են և ընդգծում արդեն իսկ գաղափարախոսական շեղման արդյունք հանդիսացող րեղեկարվության հոսք:



Ավարտելով նորությունների մշակման փուլում ՋԼՄ-ների գործունեության վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ գաղափարախոսական շեղումը կանխորոշում է ՋԼՄ-ների կողմից իրականության աղճատումը, և դա պայմանավորված է տեղեկատվության հետ լրագրողների աշխատանքի ռազմավարությամբ ու մարտավարությամբ, ինչպես նաև նորությունների պատրաստման գործընթացի էությամբ: Ինչպես հայտնի է, ՋԼՄ-ները կառուցում են իրականություն և ոչ թե ներկայացնում իրականության իրական պատկերը [Tuchman, 1972: 12, մեջբերումն ըստ՝ Lichtenberg, 2000: 245]: Ինչպես այս հոդվածում փորձ է արվել ցույց տալ՝ ՋԼՄ-ների կողմից իրականության կառուցումը իրագործվում է տարբեր կառուցակարգերի կողմից, ինչպիսիք են, օրինակ, նորությունների արժեքը կամ առօրեականությունը, նորությունների նախօրոք ակնկալումը, սակայն իրականության աղճատման գործառնության լուծումը մնում է նույնը. դա տեղի է ունենում իրականության միավորների կոնցեպտուալ տեսակավորման և դասակարգման միջոցով:

### **Եզրակացություն**

Այն, թե ինչպես են ՋԼՄ-ները հավաքում և մշակում տեղեկատվությունը քաղաքական նորություններ պատրաստելու համար, անխուսափելիորեն պայմաններ է ստեղծում գաղափարախոսական շեղման առաջացման համար, քանի որ լրագրողները մշտապես կոնցեպտուալ կերպով դասակարգում և տեսակավորում են տեղեկատվությունը: Եվ, իրոք, ինչպես ՄակՆեյրն է ասում, գոյություն չունի անաչառ լրագրություն, գոյություն ունեն միայն «տարբեր ոճի լրագրություններ և նորությունների արժեքների աստիճանակարգեր» [1998: 12]:

Գաղափարախոսական շեղման ծագման համար հոդվածում դիտարկված կառուցակարգերը և միջոցները, ինչպիսիք են՝ նորությունների արժեքային համակարգը, աղբյուրներ-լրագրողներ փոխգործակցության «առաջնային սահմանողների» ձևաչափը, ազդում են ոչ միայն նորությունների բովանդակության վրա, այլև հասարակության մասշտաբով գաղափարախոսական հետք են թողնում: Վերնախավերը և բյուրոկրատիաները, որոնք կան-

խորոշում են ՋԼՄ-ների իրականությունը, հաջողությամբ օգտագործում են ՋԼՄ-ներն իրենց նպատակների համար: Մրա արդյունքում «հասարակության ՋԼՄ-ներն անհրաժեշտաբար լեգիտիմացնում են այդ հասարակության սրբապուս քվոն» [Gerbner, մեջբերումն ըստ՝ Tuchman, 1978: 156]: Իրոք, «...լիբերալ լրագրությունը հիմնականում շեղում ունի դեպի կապիտալիզմ՝ որպես փնտրանքային, սոցիալական և քաղաքական համակարգ, որի մեջ այդ լրագրությունն առաջացել և զարգացել է» [1998: 31]:

Այս հողվածում փորձ է արվել այն փնտրանքային հայտնել, որ ՋԼՄ-ների կողմից իրականության աղճատումը չի կանխորոշվում միայն գաղափարախոսական շեղումով կամ պարբերական գործընթացով՝ իրարից անկախ: Նորությունների հավաքման և մշակման առօրեականությունն անխուսափելիորեն հող է ստեղծում գաղափարախոսական շեղման համար, որն էլ իր հերթին աղճատում է ՋԼՄ-ների իրականությունը: Այսպիսով, գաղափարախոսությունը և պարբերական գործընթացը գործում են սիմբիոտիկ միասնության մեջ, և այն դեպքերը, երբ քաղաքական հաղորդակցության մասնակիցներն ուղղակիորեն են փորձում գաղափարախոսական շեղում «ներարկել» նորությունների բովանդակության մեջ, առավելապես բացառություն են կազմում. բավարար է պարզապես որպես փնտրանքային աղբյուր համապարասխան կերպով և համապարասխան պահին ներկայացնել փաստերը:

### Գրականության ցանկ

1. Blumler, Jay G. and Gurevitch, Michael (1995) *The Crisis of Public Communications*. London and New York: Routledge.
2. Cockerell, Michael. (1988) *Live from Number 10: The Inside Story of Prime Ministers and Television*. London and Boston: Faber and Faber.
3. Crowley, David and Mitchell, David (eds) (1995) *Communication Theory Today*. Cambridge: Polity.
4. Dearing, James and Rogers, Everett (1996) *Agenda Setting* London: SAGE
5. Ericson, Richard V., et al (1989) *Negotiating Control: A Study of News Sources*. Toronto: University of Toronto Press
6. Galtung, Johan and Ruge, Mari (1973) “Structuring and Selecting News” In Cohen, Stanley and Jock Young (eds.) *The Manufacture of News: Social Problems, Deviance and the Mass Media*. London: Constable, pp. 62-72.
7. Hall, Stuart (1973) “A World At One With Itself” In Cohen, Stanley and Young, Jock (eds.) *The Manufacture of News: Social Problems, Deviance and the Mass Media*. London: Constable. pp. 85-93.
8. Hallin, Daniel and Mancini, Paolo (1984) “Speaking of the President: Political Structure and Representationa Form in U. S. and Italian Television News” *Theory and Society*, 13, 6: 829-850.
9. Hartley, John (1982) *Understanding News: Studies in Culture and Journalism*. London: Methuen.
10. Ingham, Bernard (1991) *Kill the Messenger*. London: Harper Collins
11. Janowitz, M (1975) “Professional Models in Journalism: The Gatekeeper and the Advocate”, *Journalism Quarterly*, 5: 618-626, 662.
12. Lichtenberg, Judith (2000) “In Defence of Objectivity Revisited” In Curran, James, and Gurevitch, Michael (eds.) *Mass Media and Society*. London: Arnold. pp. 238-254.
13. Manning, Paul (2001) *News and News Sources: A Critical Introduction*. London: SAGE.
14. McNair, Brian (1999) *An Introduction to Political Communication*. London and New York: Routledge

15. McNair, Brian (1998) *The Sociology of Journalism*. London: Arnold.
16. McQuail, Dennis (2000) *McQuail's Mass Communication Theory* London: SAGE
17. Murdoch, Graham (1973) "Political Deviance: The Press Presentation of a Militant Mass Demonstration" In Cohen, Stanley and Young, Jock (eds) *The Manufacture of News: Social Problems, Deviance and the Mass Media*. London: Constable. 157-175.
18. Negrine, Ralph (1989) *Politics and the Mass Media in Britain*. London: Routledge.
19. Nordenstreng, Kaarle (1972) "Policy for News Transmission" In McQuail, Denis (et al) *Sociology of Mass Communications: Selected Readings*. Harmondsworth: Penguin Books. pp. 386-405.
20. Rock, Paul (1973) "News as eternal recurrence" In Cohen, Stanley and Young, Jock (eds) *The Manufacture of News: Social Problems, Deviance and the Mass Media*. London: Constable. pp 73-80
21. Roshco, Bernard (1975) *Newsmaking*. London and Chicago: University of Chicago Press.
22. Schlesinger, Philip (1978) *Putting "Reality" Together: BBC News*. London: Constable
23. Schudson, Michael (2000) "The sociology of News Production Revisited (Again)" In Curran, James and Gurevitch, Michael (eds.) *Mass Media and Society*. London: Arnold. pp. 175-200.
24. Sigal, Leon (1973) *Reporters and Officials: The Organization and Politics of Newsmaking*. London: D. C. Heath and Company.
25. Tuchman, Gaye (1978) *Making News*. London: Free Press.
26. Tunstall, Jeremy (1970) *The Westminster Lobby Correspondents: A Sociological Study of National Political Journalism*. London: Routledge & Kegan Paul.
27. Watson, James (1998) *Media Communications: An Introduction to Theory and Process*. Basingstoke: MacMillan.
28. Webster, Frank (2002) *Theories of the Information Society*. London: Routledge.

**Ara Brutyan**  
**PhD of Political Sciences**

**ON OF MECHANISMS OF IDEOLOGY INTO  
POLITICAL NEWS**

Mass media are viewed as a means of distributing political news. In this process the role of ideologies is dealt with and also the value-system which, conditioned by situations, works on ways out. Ideological directness of delivering information in the system of the present, past and future.

Նրափարակչային խմբագիր՝	<b>ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ</b>
Նամակարգչային շարվածքը և ձևավորումը՝	<b>ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ</b>
Սրբագրիչ՝	<b>ՍՎԵՏԼԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ</b>
Տեխնիկական խմբագիր՝	<b>ԱՍՅԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ</b>

Տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 68x100, թուղթը՝ օֆսեթ,  
տպաքանակը՝ 300, հրատ. մամուլը՝ 8:

Տպագրվել է «Տիգրան մեծ» տպագրատանը  
(հասցեն՝ Երևան, Արշակունյանց 2)